


ՍԻՈՆ
Կրօնական Գրական
Բանասիրական



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐՐԱՌԱՂԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅԱՆ

ՀՈՐ
 ԵՐԶԱՆ

1961

ԼԵ.
 ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، دينية، أدبية، ثقافية. للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
 Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	երես
Կոնգակ՝ Ամեն. Հայոց Վեմ. Հայրապետեն	33
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Մեր կրօնական գրականությունը	35
ԿՐՕՆԱԿԱՆ	
— Հաւատարմութիւն քրիստոնէութեան արժեքներուն հանդէպ	ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ 38
ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ	
— Եղեբեղ	Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 43
Մի փորձ «Գիրք Թղթոց»ի բերի մասերի վերա- կանգնման ուղղութեամբ	ՊՐՈՖ. - ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ - ԲԷԿ 46
ԵԿԵՂԵՅԱ - ՊԱՏՄԱԿԱՆ	
— Եկեղեցւոյ միութեան վերաբերեալ սեսութիւններ	Թրգմ. Մ. Ա. Օ. 50
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
— «Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի Համեմատութեամբ 562 Լեզուների»	ԱՆՈՒՇԱԿԱՆ ՎՐԻ. ԶՂԶԱՆԵԱՆ 54
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ	
— Միջոցը եւ ոգին	Թրգմ. ՇԱՀԷ ՎԱՐԻԱՊԵՏ 58
Շնորհաւորական գիր՝ Քենքըրպըրիի Արքեպիսկոպոսէն	61
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Եկեղեցականք - Բնականք	61
— Պատօճականք	63

ՍԻՈՆ -ի Տարեկան Բաժնեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)


—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1961

◀ ՓԵՏՐՈՒՄ ▶

ԹԻՒ 2



**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ
ՈՂՈՐԾՈՒԹԵԱՄԲԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՐԸ ԱԶԳԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԵԱՅԲԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՐԵԱՐ
ԱԹՈՒԹՅՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԲԱԳԵՂԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՄԻԲՈՅ ԷԶՄԻԱՆՆԻ**

ԳՐԻՍՏՈՍԱԴԱՆԴԻ ՄԻԲՈՑ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԼԵՄԻ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԹՈՒՐ-
ԳԻՈՑ ՀԱՅՈՑ, ԱՐԳԵՊԻՍԿՈՍՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐ-
ԿԱԽԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ՀԵՐԵՍՓՈԽԱՆԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԳՈՑ
ԵՒ ՊԱՇՏՈՆԷԻՑ ԵՒ ՄԻԲԵՑԵԱԼ ՀԱՄԱՑՆ ՀԱՆԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ամենակալին Աստուծոյ ողորմութեամբ, վերանորոգուեցաւ Հայրենի հողին վրայ
մեր պատմական սուրբ վանքերէն մէկը եւս՝ Ս. Շողակաթ եկեղեցին, որ մեր միւս հնա-
դարեան վանքերու կողքին, կը հանդիսանայ քարահիւս գոհար մը՝ հայկական ճարտա-
րապետական իր կառույցով:

Հոկտեմբեր 15ին, Շաբաթ օր, օժեցինք եւ օրհնեցինք վերանորոգուած Ս. Շողա-
կաթ եկեղեցւոյ Ս. Սեղանը, եւ յաջորդ օրը, Հոկտեմբեր 16ին, Կիրակի, Հայրապետա-

կան Ս. Պատարագ մատուցինք հաւատացեալներու բազմութեան եւ բարեպաշտ բարեբարներ, Հալէպարնակ Տէր եւ Տիկին Սուրէն եւ Շաքէ Գալէնտէրեաններու ներկայութեան:

Ս. Շողակաթ եկեղեցին Վաղարշապատի մէջ երբեմնի արքունական հնձանն էր, ուր բնակութիւն հաստատած էին Ս. Հռիփսիմեան կոյսերը, սպասելով Տիրոջ այցելութեան:

Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի համաձայն, «ի տեղւոջ հեղման արեանն կուսանաց, շինեցին երկս վկայարանս, մին ի հիւսիսոյ յարեւելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանականն Հռիփսիմէ երեսուն եւ երկու ընկերօք, եւ զմիւսն շինեցին ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեացն Գայիանէ, նորուն անուցին երկու ընկերօք, եւ Զիւսն եւս, մօտ ի հնձանն, ի մէջ այլեղն»:

Այսպիսով, Ս. Շողակաթ եկեղեցիին գոյութիւնը կը բարձրանայ մինչեւ Գ. դար, Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ աշխարհաշէն թագաւորի ժամանակները:

Աւելի ուշ, աղօթքի այս տունը կոչուեցաւ նաեւ Շողակաթ, «քանզի ի սմա շողաստուածելէն ի շօրէ լուսոյ ծագեաց», կամ Մարիամեի վանք, անունովը Ս. Հռիփսիմէ կոյսի խումբէն նահատակ Մարիանէի, որուն սուրբ նշխարներուն վրայ բարձրացած է Ս. Շողակաթ եկեղեցին: Այսօր ալ, եկեղեցիին հարաւային կողմը կը գտնուի նահատակ կոյսի վէմ-տապանը, ուխտի սրբավայր մը մեր հաւատացեալներուն համար:

Ս. Շողակաթ եկեղեցին ալ դարերու ընթացքին ենթարկուած է շարք մը աւերածութիւններու, Արարատեան դաշտին մէջ գտնուող մեր հոգեւոր-իմացական այլ մեծ կեդրոններուն հետ, եւ ի վերջոյ, 1694 թուականին, Նահապետ Ուռհայեցի կաթողիկոսը, քանդելով հին վկայարանին վրայ շինուած եկեղեցին, ի նորոյ կառուցած է այսօրուան Ս. Շողակաթ եկեղեցին, անսին կաթողիկէ փոքր գաւիթով մը, առատ նուէրներովը Նախիջեւանցի բարերար Աղամալին:

Մեր օրերուն, «յուսուփն անմահին Աստուծոյ», վերստին վերանորոգուեցաւ պատմական այս սուրբ եկեղեցին ալ եւ բարեկարգուեցաւ շրջափակը, սրտաբուխ նուիրատուութեամբը Հալէպարնակ աստուածասէր Տէր եւ Տիկին Սուրէն եւ Շաքէ Գալէնտէրեաններու:

Հաւատացեալ հայ ժողովուրդը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երախտագիտութեամբ պիտի յիշեն միշտ Ս. Շողակաթ եկեղեցիի հաւատացեալ բարերարները եւ պիտի օրհնեն զանոնք:


Թող Տէրը վարձահատոյց ըլլայ անոնց եկեղեցաշէն գործերուն եւ զանոնք պահէ, պահպանէ երկար տարիներ, քաջաւորը եւ երջանիկ, խաղաղութեան մէջ:

Թող միշտ կանգուն, շէն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, եւ թող անոնցմէ միշտ լոյս եւ երկնային շնորհներ տարածուին Հայոց աշխարհին եւ մեր հաւատաւոր Ազգի բոլոր զաւակներուն վրայ: Ամէն:

Տնու Կանգալա ի 1-ն Գեկեմբերի
1960 Փրկչական ամի,
եւ ի հունարիտ Հայոց Ռ-նժ,
ի վաճա Մրոյ էջմիածնի:
Հմր. 182

(Կնիք)

ՎԱԶԳԷՆ Ա.

ԾԱԹՐԱԳՈՐԸ ՊԱՅՐԱԲԻՆ ԵՒ
ԿԱՌՈՂԻՆՈՍ ԱՄԵՆԱԶՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲՆԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Մարդկային քաղաքակրթութեան հանգրուանները առհասարակ կը յատկանշուին անուանովը այն մետադներուն, որով մարդը ստեղծեց իր գործիքը և այլ առարկաները — քարի, երկաթի, պղինձի ... դարեր —. անտարակոյս որ ներկայ դարս պիտի կոչուի անուանովը գործիքներու ցանցին որ կարելի՛ կ'ընէ հսկայական յառաջդիմութիւններ՝ այն է հաղորդակցութիւնը:

Ներկայ դարը դարն է տեղափոխութիւններու, մինչև իսկ ձայնէն աւելի արագ և հեռադիտակային հեռատեսութիւններէն շատ աւելի անդին:

Բայց աւելին՝ դարն է մանաւանդ հաղորդակցութեան միւս միջոցներուն, որոնք կը կապեն ամենահեռաւոր երկիրներու մարդեր՝ ձայնով և գիրով, շնորհիւ ձայնասփիւռին, հեռատեսիլին, թերթին և նման անդրուվարներու:

Դժուար է ճշդել թէ հաղորդակցութեան միջոցներու տարապայման զարգացման և տարածման կը պարտինք քաղաքակրթութեան յառաջդիմութիւնը, թէ ընդհակառակն՝ քաղաքակրթութեան պտուղն է միջոցին ու ժամանակին ստրկատիպ ենթարկուելը մարդուն կամքին:

Կը յիշեմ ժօրժ՝ Տիւհամէլի մէկ դասախօսութիւնը, տրուած Պէյրութի մէջ, ազգերու քաղաքակրթութիւններու փոխանցման մասին: Յրանսացի մեծ ակադեմիկոսը իր տեսութիւնը ամբողջովին հիմնած էր կապի զաղափարին վրայ: Դասախօսութեան միտք բանին կրնար ամփոփուիլ սա նախադասութեան մէջ թէ՛ մտածման փոխանցումն է որ կը զարգացնէ քաղաքակրթութիւն մը, որովհետև քաղաքակրթութիւն մը երբ լճանայ՝ կը նեխի, իսկ երբ հոսի դէպի հեռուն՝ բարեբեր կ'ընէ ամէն հողամաս գոր կը կտրէ:

Եւ չէ՛նք զարմանար երբ Յակոբ Մանանդեանի նման հեղինակութիւն մը իր ուշադրութիւնը և պրպտումները կը կեդրոնացնէ «Հայաստանի Գլխաւոր Ճանապարհները» մը վրայ, անոնցմով բացատրելու համար եկող և զացող ազդեցութիւնները, հայ ժողովուրդի քաղաքակրթութեան պատմութեան մէջ:

Կը շեշտենք կարևորութիւնը զանազան կապերուն որոնք հաղորդակցութեան խոյովակներ են մարդէ մարդ, ժողովուրդէ ժողովուրդ՝ և քաղաքակրթութենէ քաղաքակրթութիւն, վեր առնելու համար այստեղ կարևորութիւնը գիրին, իբրև գերազանց միջոց մարդկային բարձր արժէքներու և առաջնորդող մտածումներու փոխանցման: Եւ ունինք այն տպաւորութիւնը թէ գրի փոխանցումով հաստատուած կապերը երկրէ երկիր շատ աւելի տարածուն և արագ են այսօր քան օդանւային գիծերու ցանցը:

Հեռադրային արդի միջոցներուն համար լուրին փոխանցումը վայրկեաններու հարց է, իսկ անոր փոխակերպումը տպուած թերթով՝ ժամի հարց, բայց

մանաւանդ տպուած թուղթին քանակութիւնն ու ցրուումը, վեր ամէն երեւակայելի թուանշանէ։

Բազդատենք միջոցները զոր ունէր Պետրոս ճգնաւորը, խաչակրութիւնը քարոզելու և ոտքի հանելու եւրոպայի ժողովուրդները և միջոցները զոր ունի այս կամ այն մեծ պետութիւնը, այսօր, իր ձայնը լսելի ընելու համար։

Եւ կամ, աւելի կանուխ, Քրիստոսի տանըներկու Առաքեալները և Աւետարանի այսօրուան քարոզիչը։

Կամ Պօղոս Աւետարելի թուղթեր գրելու և զանոնք տարածելու կարելիութիւնը և անսահման կարելիութիւնները, զորս ունի այսօր Քրիստոնէական եկեղեցին՝ տարածելու համար Աւետարանի պատգամը։

Անհամեմատօրէն լա՛յն է դաշտը այսօր և անբազմաթիւօրէն զօրաւոր են միջոցները Քրիստոնէական գրականութիւն մը զարգացնելու և տարածելու, Քրիստոնէական բոլոր եկեղեցիներուն համար հաւասարապէս։

Եւ սակայն ի՞նչ կ'ընենք օգտուելու համար ընծայուած կարելիութիւններէն և մեզի տրուած՝ նկայական միջոցներէն։

Այս է հարցը զոր կ'ուզենք դնել, իր միտով ծանրութեամբ, Հայց. եկեղեցւոյ պատասխանատու բարձր շրջանակներուն, ինչպէս և հաւատացեալ զանգուածին առջև։

Կրօնական գրականութեան զարգացումը պահա՞ծ է համեմատութիւնը տպարանական միջոցներուն և զիրի տարածման արդիական միջոցներուն հետ։ Եկեղեցւոյ կոչումն է շարունակելով Առաքեալներուն զօրծը՝ Աստուծոյ խօսքը տարածել մարդոց մէջ։ Նո՛յնն է և չի՛ կրնար տարբեր ըլլալ Հայց. եկեղեցւոյ կոչումը, անշուշտ իր ազգային լեզուով, աւանդութեամբ և նկարագրով։ Գերադոյն ճիշդ եկեղեցիին եղած է աւետարանումի զօրծը, պայքարելով մօրա վարդապետութիւններու դէմ, ուղիղ գծելով հաւատքի ճամբան, համոզելի փաստերով և մանաւանդ՝ ներշնչումով։

Արդ՝ ի՞նչ կը ներկայացնէ մեր կրօնա-եկեղեցական գրականութիւնը, այսօր, քանակով և բովանդակութեամբ, ո՞ր աստիճան կը յաջողի ան հակակրօնական և հակա-եկեղեցական զաղափարներու տարածումը սահմանափակել, ո՞ր աստիճան կը լուսաբանէ և կ'առաջնորդէ գայթակղեալ միտքեր և մանաւանդ՝ ո՞ր չափով կ'ուսուցանէ ճամարտութիւնն ու հաւատքը։

Հարցեր, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ է որ ըլլան մեր եկեղեցիին զլխաւոր մտահոգութեան առարկան։

Հայ գիրը, վերջին տասնամեակներու ընթացքին մասնաւորաբար, տարօրինակ աճումով մը զարգացաւ։ Առաջին հերթին՝ մամուլը։ Ոչ ունեցած էինք կարելիութիւնը և ոչ ալ կարողութիւնը հայ թերթը տարածելու բոլոր երկիրներուն վրայ. տակաւին կէս դար առաջ միայն, մատի վրայ կը համրուէին Պոլսոյ և Կովկասի հայ թերթերը. իսկ իւրաքանչիւրին տպաքանակը այսօրուան չափանիշերով՝ ծիծաղելի ըլլալու չափ սահմանափակ էր։

Աջքի առջև ունինք Յովհաննէս Պետրոսեանի պատկառելի «Հայ Պարբերական Մամուլի Իրելիդարաֆիա»-ն։ Կը համրենք ցանկին անունները. 1794էն 1900 հրատարակուած են 260ի հասնող օրաթերթեր, շաբաթաթերթեր և պարբերականներ. կարեւոր և անկարեւոր, երկար տարիներով հրատարակուած և կամ

մի քանի թիւեր միայն տուած։ Մինչդեռ 1900էն 1956ի միջև հրատարակուած պարբերական մամուլը կը հաշուէ մօտ 1250 անուններ։ Այսինքն տասնապատուում թիւի։

Ուրեմն կրնանք ըսել անվարան որ հայ մամուլի աճման յառաջիկայացը, ընդհանրապէս, հետեւած է դարուս քաղաքակրթուած ազգերու մամուլի զարգացման ընդհանուր յայտարարին։ Անուններուն հետ՝ աւելցած են տպաքանակները և երկիրներու անունները, ուր հայ թերթ կը հրատարակուի։

Կը միայ տեսնել թէ աճման ընդհանուր երևոյթին մէջ՝ Ի՞նչ տեղ կը զբաւէ կրօնական պարբերականը։

Առաջին հերթին՝ աչքի կը գարնէ խոշոր պակաս մը. Հայաստանեայց Եկեղեցին չունի իր անունով խօսող օրաթերթը։

Պիտի ըսուի, գիտենք, և առարկուի թէ Ան չէ՝ հատուած մը՝ նման մեր ժողովուրդը՝ բաժնող քաղաքական խմբաւորումներուն, որպէսզի ունենար իր «օրկան»ը, թէ Հայց. Եկեղեցին կը պատկանի Ազգին և վե՛ր է խմբակցական նկատումներէ։

Կը պատասխանենք թէ Հայց. Եկեղեցին չէ՝ և չի՛ կրնար ըլլալ կուսակցական տիրաբոյժ խմբակցութիւն մը, կազմակերպուած քաղաքական գործերու պահանջներ համաձայն։ Սակայն այդ չի՛ նշանակեր թէ Հայց. Եկեղեցին չէ՝ նաև զաղափարաբանութիւն մը, որ ունի իր ըսելիքը իր գաւակներուն։ Եւ այդ՝ ամէն օր և ամէն առթիւ։

Որովհետև կրօնքը պէտք չէ՝ որ սահմանափակուի բարեպաշտութեամբ։ Կրօնքը աշխարհայեացք է և ընդհանուր բարոյագիտութեան խարխիւ։ Կրօնքը խոստում մը չէ՝ միայն յաւիտենական կեանքի, այլ մահաւանդ պատգամ մը՝ այս կեանքին իբրև ուղեցոյց։ Եւ չարաչար կը սխալին անոնք որոնք կը կարծեն թէ կարելի է մարդուն ներքին աշխարհը բաժանել զանազան անշտտ մասերու և կրօնական զգացումին յատկացնել սահմանափակ անկիւն մը, ձգելով անկէ դուրս՝ գիտութիւն, արուեստ և կամ նոյնիսկ բարոյական։

Մարդու հոգին մաքուրութիւն մըն է և իր զործունէութեան զանազան կերպերը այնքան սերտօրէն կը կրեն ներազդեցութիւնը իրարու, որ սահման գծել և իւրաքանչիւր զործունէութեան անկախութիւնը հռչակել պիտի նմանէր մարմինն զգայարանները կտրատելու և սպասելու որ խլուած աչքը առանձինն տեսնէ կամ կարուած ականջը առանձինն լսէ և կամ հանուած ուղեղը առանձինն զգայ և մտածէ։

Կրօնքը մտածման ոգին և զգացումներու ներշնչումն է հաւատաւոր և հաւասարակշռուած մարդուն։ Կրօնքը խարխիւն է հաւաքականութիւններու բարոյականութեան և ներշնչումի մեծ աղբիւրը՝ քաղաքակրթական արժէքներուն։ Նման ճշմարտութիւններ փառաբան չեն կարօտիր, մահաւանդ Հայուն համար, որուն պատմութիւնը քսան դարեր ընդգրկող պայքարի պատմութիւն մըն է, մղուած իր Եկեղեցիով պայմանաւոր հոգեկան բարձր արժէքներու պահպանման անհրաժեշտութենէն։

Արդ՝ ինչպէ՞ս քացատրել ազգային-եկեղեցական հայ մամուլի մը չգոյութիւնը, եթէ ոչ ընդհանուր այն երևոյթով, որուն պիտի անդրադառնանք երկարօրէն և որ կը կոչուի անցարբերութիւն։

ԿՐԹՆԱԿԱՆ

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԷՊ

«Կա՛լ զոր ունիսդ»
(ՅԱՅՏ. Գ. 11)

Այս խոսքը Յայտնութիւն Յովհաննու գրքին մէջ գրուած եօթը նամակներէն մէկուն պարունակութեան մէկ մասն է, այսինքն՝ Փիղատեղփիոյ (Ֆիլատէլֆիա) եկեղեցիին ուղղուած նամակին մէկ կարճ նախադասութիւնը:

Առաջին դարու մէջ Հռովմէ և Աղեքսանդրիան տակաւին մեծ կեդրոններ չեղած, քրիստոնէութիւնը ունէր երեք նախնական կեդրոններ: Անոնցմէ մէկն էր Պաղեստինի մէջ Նեուսաղէմ քաղաքը, ուր տեղի ունեցած էին Քրիստոսի տեօրինական դէպքերը: Երկրորդը՝ Սիւրիոյ մէջ Անթիոքը, ուր Յիսուսի հետեւողներ առաջին անգամ քրիստոնեայ կոչուեցան: Իսկ երրորդը՝ Փոքր Ասիոյ մէջ Եփեսոսը, ուր Յիսուսի հետեւողներ քրիստոնէական կրօնի միատիկ փորձառութեան տիրացան:

Ներուսաղէմի մէջ քրիստոնեաներ կը զբաղէին Մովսիսական կրօնի ծէսերն ու արարողութիւնները քրիստոնէականացնելու հարցով, իրենց առաջնորդ ունենալով Յակոբոս և Պետրոս առաքեալները:

Անտիոքի մէջ կը զբաղէին յայնքը և հեթանոսները քրիստոնեայ դարձնելու խնդիրով, իրենց առաջնորդ ունենալով Պողոսն ու Բառնաբասը:

Իսկ Եփեսոսի մէջ կը զբաղէին ընդհանրապէս հոգեւոր կեանքի ներքին խորութեան մէջ զարգանալու կրօնական միատիկ հարցերով, իրենց առաջնորդ ունենալով աւետարանագիր Յովհաննէսը, Երէց Յովհաննէսը և ուրիշներ:

Չորրորդ աւետարանը, որ միւս երեք աւետարաններէն աւելի հոգեւոր աւետարան մը նկատուած է, այս միջավայրի ծնունդն

է, և հոս ապրուած միատիկ կեանքի դրոշմը կը կրէ:

Փոքր Ասիոյ մէջ Եփեսոսէն զատ կային նաեւ վեց ուրիշ քաղաքներ, որոնց ամենուն մէջ ալ առաջին դարուն հիմնուած էին քրիստոնէական եկեղեցիներ: Փիղատեղփիոյ Եկեղեցին Փոքր Ասիոյ այս եօթը եկեղեցիներէն մէկն էր:

Փիղատեղփիա քաղաքը հիմնուած է Փիղատեղփիոս անուն թագաւորի մը ձեռամբ, փրկչական թուականէն երկու դար առաջ, և այդ իսկ պատճառաւ հիմնադիրին անունը կը կրէ: Այս քաղաքը կը գտնուի Զմիւռնիայէն մօտաւորապէս յիսուն մղոն դէպի արեւելք: Յիսուսի մամանակ, Հռովմէի պետութեան մէջ քաղաքն էր: Ժ՛. դարէն սկսեալ Թիւրքիոյ մաս կը կազմէ, և անկէ ի վեր, հակառակ յաճախակի պատահած երկրաշարժներու, պահած է իր գոյութիւնը, Ալա Շէհիր անունի տակ, Թիւրքիոյ տիրապետութեան ներքեւ:

Փիղատեղփիոյ Եկեղեցին գրուած այս նամակը եօթը համարներէ կը բաղկանայ, և երբ զանոնք վերլուծենք՝ չորս կարեւոր կէտերու կը հանդիպինք:

Առաջինը գնահատութիւն մըն է: Այս եկեղեցին բարոյական քիչ ոյժ ունենալով հանգեւած կրցած է Աստուծոյ խօսքը հաստատ պահել և Յիսուսի անունը՝ չ'ուրանալ: Այս է որ կը գնահատուի այս նամակին մէջ:

Երկրորդը կենաց Բանի քարոզութեան համար հրաւէր մըն է: «Ահա քու առջևդ բաց դուռ մը գրի, և զայն աւարդ մը չի կրնար զսցնել: Այս խօսքով նամակագիրը անոնց ըսել կ'ուզէ թէ, ձեր առջև բացուած ամբողջ Փոքր Ասիոյ ընդարձակ դաշտը կայ, հոն կ'ապրին շատ մը հրեայ դադթականներ և հեթանոս ցեղեր՝ որոնք պէտք ունին Աւետարանի կենսաբաշխ և օրհնարքի պատգամներուն: Ինչպէս նաեւ ձեր առջև կայ ընդարձակ աշխարհ մը. գացէ՛ք անոնց, և փրկութեան աւետիսը տարածեցէ՛ք:

Երրորդը խոստում մըն է: «Այն որ կը յաղթէ, անիկա իմ Աստուծոյ տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ, ու ա՛լ պիտի չ'ելլէ դուրս, և անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ . . . և իմ նոր անունս: Այս խոստումը անոնց համար է՝ որոնք այդ առաքելութեան պաշտօնը կը

կատարեն և կ'ապրին յաղթական կհանք մը։
Իսկ չորրորդը թիւադուրս լինէն է և կամ պարզ պատուէր մը, «Ունեցածդ ամուր բռնէ», որ կը կազմէ գրութեանս խորհրդածութեան նիւթը։

Այս նամակին մէջ, փրկատու դիրքի վրա կ'ընդգրկեն իր թիւադուրսի հաւատարմ մնալ իր ունեցած աւանդներուն ու որդեգրած քրիստոնէական սկզբունքներուն, որոնցմէ սմանք են հետեւեալները։

Ա. — Ամուր բռնէ՝ բխտոնեական այն նամատուրները զորս ունին։ Խնչ է ճշմարտութիւնը։ Ժամանակին երեսուդէ մի մէջ Պիղատոսն ալ հարցուց ասիկա։ Ճշմարտութիւնը տիեզերքին հիմունքը կազմող և տիեզերքը կառավարող սկզբունքներուն համադրութիւնն է։ Երբ բնութեան ակնարկ թընտենք, հոն կը հանդիպինք անյիշելի օրէնքներու և յաւիտենական սկզբունքներու։ Մեր ֆիզիքական կեանքը այդ օրէնքներով կը կառավարուի։ մեր բարոյական կեանքը այդ օրէնքներուն ենթակայ է, ինչպէս նաև մեր հոգեւոր կեանքը կ'աճի ու կը զարգանայ այդ օրէնքներուն ու սկզբունքներուն համեմատ։

Այս յաւիտենական սկզբունքներուն կեդրոնը Աստուած է։ Անոնք ուրիշ բան չեն բայց եթէ Աստուծոյ կեանքին ունակութիւնները։ Աստուած այս սկզբունքներով կ'ապրի և անոնցմով ալ կը կառավարէ տիեզերքը։ Բնութեան մէջ կեանքի յառաջնադասումը, ներգլխականութիւնն ու զեղեցիկութիւնը այս օրէնքներով կը բացատրուին։ Մեր երջանկութիւնը նաև անոնցմէ կախեալ է։ Եթէ մէկը կը փափաքի կեանքը բնականոն ապրիլ, ստիպուած է յարգել այս սկզբունքները։ Հաւատքով պարագային կը տուժէ ոչ միայն ֆիզիքապէս, այլ նաև ընկերական, բարոյական ու հոգեւոր կեանքի աճման տեսանկյուններէն։

Խնչ է մեր պարտականութիւնը ճշմարտական հանդէպ։ Ոչ ուրիշ բան՝ բայց իթէ սորվիլ ու սորվեցնել զայն մարդոց։ Մարդ ուրիշներուն չի կրնար սորվեցնել այն՝ զոր ինքը սորված չէ։ Ուրեմն սորվեցնելէ առաջ կուգայ սորվիլը։ Բայց լոկ սորվիլ ալ չի բաւեր, պէտք է զայն իւրափոխել, կեանքի վերածել, և մեր առօր-

եայ կեանքին մէջ գործադրել։ Նոյնպէս անոր ետեւ կ'ենալ պէտք է զայն պաշտպանելու համար։

Մեր կեանքի առաջնորդը՝ Յիսուս, այսպէս ըրաւ։ Ան ճշմարտութիւնը գնահատեց, սիրեց, սորվեցուց, ապրեցաւ և Պիղատոսի ատենին առջև ալ վկայեց ու ըսաւ։ «Աս աշխարհ եկած եմ, որպէսզի նեմատուրեան վկան ըլլամ, այն ամէնը որ նեմատուրեանն է, իմ ձայնիս ակամջ կը դնէ» (Յովհ. ԺԸ. 37)։ Ապա, ճշմարտութեան իրեր կենդանի վկայ, իր կեանքն իսկ զոհեց Գողգոթայի խաչին վրայ։ Յիսուսի կեանքը յիշատիւ ճշմարտութեան մարմնացումն էր։ Ան ոչ միայն ճշմարտութեան համար ծնած էր, այլ նաև անով սնած, անով զբաղած և անոր դատին ու յաղթանակին համար ալ ախոյեան հանդիսացած էր։ Քրիստոնէայ կոչուիլ Յիսուսի հետեւորուն վրայէն քաշու և ճշմարտութեան պաշտպան կանգնել կը նշանակէ։

Հրէից իմաստունը կ'ըսէ. «Ճշմարտութիւնը ծախու աճ, եւ զայն մի՛ ծախես» (Առակ. ԽԲ. 23)։ Այսօր որքան մարդիկ կան, որոնք ոչ միայն ճշմարտութիւնը ծախու չեն աճեիր, այլ կը ծախեն զայն շատ չնչին գնով մը։ Առժամայն փոքրիկ շահու մը համար կը ծախեն յաւիտենական սկզբունքները։ Նիւթական փոքր մէկ յաջողութեան սիրոյն, իրենց մնացած գանձը մեռքէ կը հանեն։ Լուսաւորը ձեռք բերելու համար յաւիտենականը կը կորսնցնեն։

Բ. — Ամուր բռնէ՝ այն հաւատքը որ կայ բոլ մեզդ։ Քրիստոնէութիւնը հաւատքի կրօնք է։ Անիկա հաւատքով կը սկսի, հաւատքով կը շարունակուի և հաւատքով ալ իր կատարելութեան կը հասնի։ Քրիստոնէայ ըլլալ բաւին լաւագոյն իմաստով կը նշանակէ հաւատացեալ ըլլալ։ Խնչ բանն է հաւատալ սակայն։ Հաւատալ Աստուծոյ գոյութեան, Անոր արդարութեան, ճշմարտութեան վերջնական յաղթանակին և Աւետարանի կենսատու վարդապետութեանն։ Հաւատքի դերը մարդկային առօրեայ կեանքի մէջ շատ ակնբեր է։ Անիկա աղբիւր է միջնորդութեան։ Երեւակայեցէք երկու անհատներ, մէկը անհաւատ, միւսը հաւատացեալ, որոնք միեւնոյն պարագա-

ներու ներքե յանկարծ դժբախտութեան կը մատուռին: Անհաւատը իսկոյն կը գանգատի Աստուծոյ դէմ, բնութեան դէմ, իր միջափայլին և կեանքի գոնական պայմաններուն դէմ: Նոյնիսկ կը հայոյէ Աստուծոյ, և երբեմն ալ քայլ մը աւելի առաջ երթալով, յուսահատութեան մէկ նուազանք մէջ, իր կեանքին վերջակէտը կը գնէ: Երբ Երանելի ծանր տառապանք կը կրէր, անոր կինը դառնալով իրեն ըսաւ. «Աստուծոյ հայոյէ ու մեռի՞ր» (Թոր, Բ. 9): Այս է ան՝ անհաւատ կեանքի մը պատկերը՝ որ զուրկ է Ս. Հոգիի սփոփանքէն:

Հաւատացեալը սակայն այսպիսի պարզաներուն աւելի կը փարի իր հաւատքին: Հաւատքը իրեն տեսիլք կուտայ ու Աստուծոյ հանդէպ աւելի վստահութիւն կը ստեղծէ իր մէջ, որով կը սերտանայ իր յարաբերութիւնն ու չփումը իր Արարչին հետ, և այսպէս կը ստանայ Անկէ ոչ միայն մխիթարութիւն, այլև նորմալ օրհնութիւններ: Պատահած է նոյնիսկ որ այսպիսի հաւատացեալ մը զինքը մխիթարելու եկողները ինքը մխիթարած է:

Հաւատքը ենթական կը զօրացնէ նաև յաղթելու համար իր կրքերուն և աշխարհի փորձութեանց (Ա. Թողմ. Ե. 4-5): Երաւայեցուց Թուղթին ԺԱ. զլիսուն մէջ կը յիշուին բազմաթիւ մարդոց անուններ՝ որոնք իրրև հաւատքի հերոսներ ոչ միայն աշխարհի յաղթեցին, այլ մինչև անգամ մահը առ ոչինչ կատարեցին: Գրիստոնէական Եկեղեցւոյ պատմութեան մէջ անթիւ ու անհամար մարտիրոսներ ու նահատակներ հաւատքին կը պարտին իրենց ցոյց տուած քաջագործութիւնները: Հաւատքը իրենց համար ոչ միայն մխիթարութիւն և ոյժ էր, այլ նաև ապաստանարան՝ կեանքի ճշգրտագործ մայր կենտրոններուն մէջ:

Հին Աւիստի մէջ Աբրահամ հաւատքի հայր կոչուած է: Անոր համար որ հաւատքը զինքը կենդանի Աստուծոյ հետ չփման բերած էր հեթանոսական միջափայլի թանձր խաւարին ներքե: Ան մինչև վերջն ալ պահեց այդ հաւատքը որ «Իրեն արգարութիւն սեպուեցաւ» (Հոովմ. Գ. 3, Յակ. Բ. 23): Նոր Աւիստի մէջ Ս. Պօղոս ուրիշ ախոյեան մըն է հաւատքի: Եթէ Յովհաննէս կը կոչուի սիրոյ առաքեալ, Պետրոս՝ յոյսի, ի-

րաւամբ պէտք է Պօղոսն ալ կոչուի հաւատքի տառքեալ: Քանզի իր գրութիւնները լի են հաւատքի շատագոյութեամբ: Ինչ ծառայութիւն որ ան մատոյց քրիստոնէութեան՝ կը պարտի իր հաւատքի ոյժին: Ոչ միայն Պօղոս տառքեալ հաւատքը քարոզեց ու ապրեցաւ, այլ նաև պահեց զայն մինչև իր կեանքի վախճանը: Իր վերջին օրերուն, Տիմոթէոսի գրեց այսպէս. «Իարի պատեալով պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքի պահեցի» (Բ. Տիմ. Գ. 7):

Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ Վարդան է Վարդանանք քրիստոնէական սկզբունքները պաշտպանելու համար՝ իրենց կեանքը զոհեցին, մեռան, բայց հատաստ կեցան իրենց սուրբ հաւատքին վրայ: Իրենց ցոյց տուած քաջագործութիւնները ուրիշ բաներ չէին, այլ զիտակեց հաւատքի մը յառաջ բերած արդիւնքները: Պարսից աշխարհը ապշեցաւ հաւատքի այս անպարտելի ոյժին առջև: Մենք հայերս, այսօր մեր քրիստոնէութիւնը կը պարտինք իրենց հաւատքի այս զուգազուրկութեան:

Յիսուսի առաքեալներուն մէջ Յուդա իսկարիփոսայի միւս առաքեալներու նման չկրցաւ իր հաւատքը պահել մինչև վերջը: Առաջին դարու քրիստոնէաներուն մէջ Դեմաս անուն հոգևոր գործիչ մը կար, որ առաքելական գործին մէջ Սուրբն Պօղոսի գործակցած ալ էր (Փիլմ. հոմար 24), սակայն չկրցաւ միշտ պահել իր հաւատքը: Աշխարհի տեսանելի առտէքները զինքը այնքան հրապուրեցին որ իր հոգիով սկսած գործը՝ Յուդայի պէս, մարմնով վերջացուց (Բ. Տիմ. Գ. 9): Յուդայի ու Դեմասի նման աշխարհի մէջ այժմ որքա՞ն մարդեր կան՝ որոնք բերեմէ հաւատքով կ'ապրէին, և նոյն իսկ հաւատքի արիւնջանները կը հանդիսանային, բայց այժմ կորնցուցած են իրենց քրիստոնէական այս բարձր գիտակցութիւնը, իրրև արդիւնք արծաթապաշտութեան ու աշխարհասիրութեան:

Գ. — Ամուր բոնճ՝ այն հոգեւոր կեանքը զոր կ'ապրիս: Երբ արագ ակնարկ մը նետենք մարդկութեան վրայ, հոն կը հանդիպինք կեանքի գէթ չորս տարբեր աստիճաններու: Բուսական կեանքը՝ ուր գիտակցութիւնը կը պակսի, կենդանական կեանքը՝

քը՝ ուր բարոյական ըմբռնում չկայ, մարդկային բնական կեանքը՝ ուր ներքին գոհացումը լման չէ, և հոգեւոր կեանքը՝ ուր Աստուծոյ ներկայութիւնը զգալի է և կ'ընթանայ Անոր հետ համընթաց ու ներգաշնակ:

Այս վերջինն է մարդու համար սահմանուած այն բարձրագոյն կեանքը՝ զոր Սըրբազան Մատենը հոգեւոր կեանքի հանուանէ, Պօղոս առաքեալ մարդու բնական կեանքը մարմնաւոր՝ իսկ այս բարձրագոյն կեանքը հոգեւոր կեանք կը կոչէ (Հռովմ. Ը. 5-14): Ուրիշ խօսքով, մարդու ապրած կեանքը երկուքի կը բաժնէ, մին մարմնի համար ապրուած կեանքը, իսկ միւսը՝ հոգիի: Մարմնաւոր կեանքը լի է նախանձով, հակառակութեամբ, բաժանումներով, բարկութեամբ, կոխներով, թշնամական բարքերով, մարդասպանութեամբ, չար նախաձեռնութեամբ, գինովութեամբ, անտառակութեամբ և այլն: Իսկ հոգեւոր կեանքը ասկէ տարբեր է: Հոն նախանձին տեղ մարդուն մէջ կը տիրապետէ ոչ ոք: հակառակութեան տեղ՝ խաղաղութիւնն ու հեղուիւնը. բարկութեան տեղ՝ երկայնատևութիւնը. երկպառակութեան, բաժանումներու, կոխներու, թշնամութիւններու և մարդասպանութեան տեղ՝ քաղցրութիւնը, խնդութիւնը, բարութիւնը և հաւատարմութիւնը, իսկ գինովութեան, անտառակութեան ու պիղծ կենցաղի փոխարէն՝ ժուժկալութիւնը (Պաղտ. Ե. 19-24):

Բարձրագոյն կեանքի այս գեղեցիկ յատկանիւնները ուրիշ բան չեն՝ բայց եթէ Աստուծոյ հետ շփման գալու հետեանքները՝ զորս քրիստոնէութեան մեծ առաքեալը Ս. Հովրիմ պտուղները կ'անուանէ, Մարմնաւոր կեանքը անապական է, և չի կրնար գոհացում տալ մարդու բարձրագոյն զգացումներուն: Հոգեւոր կամ քրիստոնէական կեանքն է որ մարդ էակին համար բնականն ու լուսաւոյն վիճակն է: Այս բարձրագոյն կեանքի մէջ է անհատին երջանկութիւնը, ինչպէս նաև անհատներու երջանկութեամբ՝ մարդկային ցեղին բարօրութիւնն ու խաղաղութիւնը:

Քրիստոնեայ ըլլալ այս բարձրագոյն կեանքը ապրիլ է Աստուծոյ Ս. Հոգիին առաջնորդութեամբը: Բարեպաշտութիւնը լոկ հաւատալ չէ, այլ այդ հաւատքը կեանքի

վերածել է: Ունի՞ս այս հոգեւոր կեանքը, բախտաւոր ես, պահէ՞ զայն, մշակէ՞, զարգացո՞ւր ու ամուր բռնէ՞: Հոգեկան բոլոր բաղձանքներու դրականացումն է կայսեալ է:

Դ. — Ամուր բուն՝ նաեւ քրիստոնեական այն արժանապատուութիւնը՝ որով օժտուած ես: Քրիստոնէական կենցաղի հետեւի կը նշանակէ արժանիք ունենալ: Ուրիշ կրօնքներու մէջ անհատը ստրուկ, ծառայ կամ հպատակ կը նկատուի, իսկ Աստուած՝ անմատչելի վեհապետ մը, իայց քրիստոնէական կրօնի կալուածին վրայ հաւատացեալը որդի է, Աստուծոյ զաւակը, և նոյնիսկ Յիսուս Քրիստոսի բարեկամը կամ եղբայրը (Եբ. Բ. 11-12), և Աստուած ալ Հայր մըն է՝ սիրալիր ու կարեկից: Այս կրօնքին մէջ Արարիչ և արարած, մարդ և Աստուած իրարու մօտիկ են, և իբրև հայր և որդի՝ իրարու հետ ոչ միայն կենդանի՝ յարաբերութեան մէջ են, այլ նաև իրարու հետ կը զօրծակցին:

Մեծահարուստ մը երբ փողոցի մէջ թափառող անօթի ու անպաշտպան որբի մը տէր կը զգանայ, և զայն իր ապրանքը տանելով իրեն ունեցած բոլոր ճոխութիւններուն ժառանգակից կ'ընէ, այդ որբին ընկերական զիրքը բարձրացած կ'ըլլայ, և նորանոր արժանիքներով հարստացած:

Քրիստոնէական կրօնի մէջ ալ Աստուած մեզի կը մօտանայ և մեզ կ'առաջնորդէ աւելի բարձր կեանքի մը որ լի է յաւիտեանական ճոխութիւններով: Այսպէս ասա՝ հողէն շինուած անարժան մարդ էակը արժանիքներով կ'օժտուի և շատ մը բարձր արժէքներու կը տիրանայ: Քրիստոնեայ ըլլալ ուստի Քրիստոսը մեր վրայ հաղնիլ, այսօրն Անոր արժանիքներով օժտուիլ կը նշանակէ (Հռովմ. ԺԳ. 14, Պաղտ. Գ. 27, Եփես. Գ. 24, Կող. Գ. 11): Այս առանձնաշնորհումը մեզի կը արուի Յիսուս Քրիստոսի միջոցաւ, և Աստուծոյ գիթառատ սիրուն իբրև արդիւնք: Ասիկա մեր միայուն ու թանկագին հարստութիւնն է: Մեր պարտականութիւնն է զայն ամուր բռնել ու պահպանել:

Օր մը ՎերքՊորիս թագուհին հարցունցին թէ ո՞րը կ'ուզես կորսնցնել, եթէ ան-

ԵՂԵՐԵՐԳ

ԳՐՈՒԱԾ ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵՋՄԱՆՈՑԻ ՄԸ ՄԷՋ

1. Մեկնող օրուան կը գուժէ մահն իրկնագանգն.
Բառաչելով կ'ոյորուի յամր վըրայ խարին
Նախիրն, հերկողն տուն կը դառնայ յոգնավաստակ,
Ու կը թողու աշխարհն ինծի ու խաւարին:
2. Կ'աղօտի ա'լ տեսողութեան՝ դաշտանկարն.
Օդն ամբողջ վեհ խաղաղութիւն մըն է բըռներ,
Բըզէգն է լոկ որ տրզգալով կը դառնայ պար,
Ու քընաքըն գանգերն կ'օրրեն հեռու գոմեր:
3. Բացի հոն ուր բաղեղածածկ աշտարակէն,
Լուսընկային կը գանգատի ահագըռու բուն,
Անոնց մասին, դեգերելով որ մօտիկէն,
Կը վըրդովեն իր վաղեմի առանձնութիւնն:
4. Ներքեւն այն կոշտ կընծնիին, այն գեղծի'ն շուքին,
Ուր կը հեւալ խոտը բազում դէզով բորբ'սած,
Կը քընանան նախահայրերը գիւղակին,
Ամէն մէկն իր նեղ խորշիկին մէջ երկընցած:
5. Սիւքահրաւէր խընկարտումունքն այգածագի
Պիտ՝ չարթընցնէ գիրենք. ո'չ կանչն աքաղաղի,
Ո'չ ծըլլըլոցն, շիւղածածքէն, ծիծեռնակի,
Ո'չ ալ նոյնիսկ արծազանգը եղջեր - փողի:
6. Օճախն անոնց համար պիտի ալ չըվառուի,
Ձը հոգայ ժիր տանտիկինը իր'կնածամին.
Դիմաւորող մանուկները չըպըլըլուն
Հօրն որ առնեն նախանձելի պագէն բաժին:
7. Յաճախ է հունծըն անոնց մանգ'ղին տեղի տուեր,
Ու խոփն անոնց յաճախ կոտրեր արգելքն յամառ.
Ինչպէ՛ս ուրախ քըշեր՝ լուծքը դէպի արտեր,
Ու խոնարհեր հարուածներնուն առջեւն անտառն:
8. Գոռոգութիւնն թող չըծաղրէ գործն օգտակար
Անոնց, ո'չ ալ հաճոյքը պարզ, բախտը մըթին.
Ոչ Մեծութիւնն լըսէ ժըպ'տով մը արհամարհ
Հակիրճ ու պարզ տարեգրութիւնը աղքատին:
9. Հըպարտութիւնն Արեան, Ոյժին փարթամութիւնն,
Օժիտն ամբողջ Գեղեցկութեան, Հարստութեան,
Կ'ունենան նոյն բախտն անվըրէպ վերջին ժամուն,
— Ծաւիղները փառքին կ'երթան դէպի դամբան:
10. Դուք գոռոգներ, մի՛ մեղադրէք եթէ այնտեղ,
Անոնց շիրմին վերեւ Յուշը չունի արծան,
Ջարդագործուած որ կամարովը իր շըքեղ,
Հընչեցընէ գովասանքի ուռուցիկ ծայնն:
11. Կենդանատիպ արծանն եւ կամ սափորն պատմող,
Կըրնա՞ն դարձ'նել խուսափող շունչը իր պատեան,

Կըրնա՞յ պատճին ծայնն արթընցնել լուռ, անշունչ հողն,
Կըրնա՞յ Կեղծիքն շոյել ականջը խուլ Մահուան :

12. Այս անտեսուած կէտին մէջ է գուցէ պառկեր,
Սիրտ մ'որ երբեմն Աստուածային հօրով էր վառ.
Կայսերական մականի մը յարմար ծեռքեր,
Եւ կամ մատներ ոգեշնչող կենդանի լարն :
13. Բայց Գիտութիւնն անոնց աչքին էջն իր զեղուն,
Ճոխ աւարով ժամանակի, բնաւ չըբացաւ.
Անոնց եռանդն ազնիւ ճրնշեց թրշուառութիւնն.
Նանդին հոսանքն անոնց հոգւոյն մէջ սառեցաւ :
14. Որբա՞ն գոհար կայ շողերով մարտու ու վէս,
Քորունկ ու մութ խորշերուն մէջ ծովատակին.
Որբա՞ն ծաղիկ ծընած է որ շիկնի անտես
Եւ յանձնէ իր քաղցրութիւնը անապատին :
15. Թերեւս հոն կը հանգչի այժմ Համբըրն մ'յանդուզն,
Դիմակալող իր դաշտերու բրնակալին.
Կը պառկի հոն լուռ Միլտըն մը գուցէ անշուք,
Գրովի մ'անպարտ ճապաղիքէն իր երկիրին :
16. Արժանանալ Ծերակոյտի մը ծափերուն,
Արհամարհել ցան ու կորանքն ըսպառնալ՝քին,
Առատութիւն սրփուել, երկրի մ' վրայ ժրպտուն
Կարգալ իրենց վէպը ազգի մ' մէջ նայուածքին,
17. Բախտն արգիւնց իրենց : Անոնց մէջ՝ չամեցան
Առաքինի ոյժեր. բայց ոչ ալ Մոլութեանց.
Կոտորածին մէջէն զահին չըբարձրացան,
Ջրգոցեցին Գութին դուռը առջեւ մարդկանց :
18. Պահել տագնապը գիտակից ճըշմարտութեան,
Մարել շիկնումը մըտացի Պատկառանքին,
Դիգել մասունքը ճոխութեան, Հըպարտութեան,
Բոյրովն օծուած, Մուսաններէ վառուած խունկին :
19. Հեռու կատղած ամբոխներու կրօհներէն,
Իրենց փափաքն ազնիւ բրնաւ չըշեղեցաւ,
Մեկուսացած զով Կենցաղի մ' ճամբաներէն
Անոնց զընացքը անշըռուկ եկաւ - անցաւ :
20. Բայց նոյնիսկ այս ոսկորները անարգանքէ
Պաշտպանող, կան յուշարձաններ գիւրաբեկ, որ
Կոշտ յանգերով, անդրիններով զարդարանքէ,
Կը պաղատին հառաչանքի տուրք մ'անցաւոր :
21. Ողբերգերու ու համբաւի տեղն են բրնած,
Անուն, տարիք, հեգուած անուս Մուսաներէն,
Եւ շատ մը սուրբ բընարաններ, հոս - հոն ցրուած,
Բարոյախօս գեղը՝ կին մեռնիլ կ'ուսուցանեն :
22. Քանզի երբ է, որ զերդ որս, մունը Մոռացութեան,
Այս համեցնող, անձկոտ էական ինքզինք յանձնած,
Թողնելով տաք շրջագիծը զըւարդ Սրուան,
Ձէ իսկ նետած կարօտալի յետահայեացք :

23. Մեկնող հոգին կը վըստահի սիրող սիրտի մ',
Գոցուող աչքը կ'ուզէ քանի մ' կաթիլ գուլթի,
Բնութեան ծայնը կ'կանչէ նոյնիսկ շիրմէն անդին,
Մեր մոխրին մէջ կայ հուրն անոնց սովորոյթին:
24. Դուն հոգածու մեռելներուն չըյարգըած,
Որ անարուեստ տողերով վէպն անոնց կ'պատմես,
'Թէ պատահմամբ՝ մըտքերուն մէջ խորասուզուած,
Հարցաքննէ բախտող, հոգի մ' ազգական քեզ,
25. Թերեւս ըսէ Գեղըուկ մարդ մը հերմականեր,
«Յաճախ տեսեր ենք զինք կանուխ այգածագին,
«Որ քալուածքով ըշտապօրէն ցօղբակալէր,
«Հանդիպելու, մարգին վըրայ, արեգակին:
26. «Այնտեղ, ոտքին մօտ, կուր ընող բեռկնիին,
«Որ կը հիւսէ ծեր արմատներն իր շատ վերէն,
«Կը տարածէր ան իր մարմինը կէսօրին,
«Ու կը կախուէր հոսող առուին՝ գըլգըլալէն:
27. «Անտառին մօտ, որ կը ժըպտի անգոսնելով
«Կարծես հիմա, կը դառնար ան թափառայած,
«Հոգերով խնդ, եւ կամ նեխմիրտ անյոյս սէրով,
«Կամ գըլխիկօր, տըժգոյն, որպէս մէկը լըքուած:
28. «Առտու մը զայն ա'լ չըտեսանք վրայ բըլրակին,
«Յախերուն քով, կամ սիրական մօտն իր ծառին,
«Օր մ'ալ անցաւ, չը տեսանք զայն քովն առուակին,
«Ո'չ մարգին վրայ վերը եւ ոչ քովն անտառին:
29. «Միւս օր տեսանք կը տանէին, կարգով տըխուր
«Մահերգերու, ժամուն ճամբէն դանդաղագնաց.
«Կարդալ կըրնաս, եկուր կարդայ, զի հոս է ուր,
«Փուշին ներքեւ, տապանագիրն՝ փորագրուած»:

Տ Ա Պ Ա Ն Ա Պ Ի Ր

30. Հոս կը հանգչի, գըլուխն երկրի գերկին վըրան,
Պարման մ'որուն անծանօթ էր Բախտն ու Համբաւն,
Գիտութիւնը չսոժոռուեց երբ ծնաւ ան,
Սակայն Թախիծն իրեն համար զայն վար դըրաւ:
31. Ու մեծ էր իր վեհանձնութիւնն, հոգին անկեղծ,
Եւ փոխարէն երկինքն օժտած մեծապէս զայն,
Արցունք մ'ունէր լոկ, Թըշուառին զայն ընծայեց,
'Ի երկինքն եղաւ (միակ իղծն էր) իր բարեկամ:
32. Թերութիւններն իր մի հաներ փոսէն ահեղ,
Արժանիքներն անոր միւս ա'լ մի փնտտեր դուն,
Դողդողացող յոյսով մ'անոնք հոն միատեղ,
Կը հանգչին այժմ ծոցը իր Հօրն եւ Աստուծոյն:

Թարգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԹՈՄՐՆ ԿՐԷՑ

ՄԻ ՓՈՐՁ «ԳԻՐՔ ԹՂԹՈՑ»Ի ԹԵՐԻ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

(Շարունակութիւն նախորդ քիւիէն եւ վերջ)

Այս ցանկում յիշուած յոգուածներին մի քանիսը մեզ յաջողուցից հրատարակել 1941 թուականին:

ա) «Յաղագս ժողովոց» (№ 3)⁽¹⁷⁾, որն առնչուում է Յովհանն Օննեցու «Ասկս ժողովոց», որ եղին ի Հայաս»⁽¹⁸⁾, և Գրիգոր Տաթևացու «Յաղագս ժողովոց», որ եղին ի Հայոց»⁽¹⁹⁾ գործերին:

բ) «Ասկս գաւառաց» (№ 4 և 42)⁽²⁰⁾, որն արձագանգում է թուգանդական Յուստինիանոս Ա. կայսեր 536 թուականի օրէնսգրական 31րդ նովելլայով փոքր Հայքի չորս գաւառների (Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքի) բաժանելու միջոցառումին, ասել է՝ այն բաժանման, որը քաջ ծանօթ է Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» մեզ հասած խմբագրութեան Ա. գրքի ԺԴ. գլխից»⁽²¹⁾, ինչպէս նաև Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ից»⁽²²⁾:

(17) Վերաստանի պետական թանգարանի Տեղեկագիրք, ԺԱ, էջ 46–47: Նոյնը Գերմանական Դիքինգենի համալսարանի զբոսարանի հայերէն ձեռագրաց հաւաքածուի № 102, էջ 158–159-ում (տե՛ս սոյն աշխատութեան 28րդ ծանօթագրութեան մէջ յիշուած «Յուցակը», էջ 167–168):

(18) «Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթնաղիւսի» Սահա ժողովոց, որ եղին ի Հայոս («Գրիք Թղթոց», էջ 220–233):

(19) «Գրիք հարցմանց երբեք երանեալ Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս, 1729, էջ 542–544:

(20) Վերաստանի պետական թանգարանի Տեղեկագիրք, ԺԱ, էջ 48: Նոյնը գերմանական Դիքինգենի համալսարանի զբոսարանի հայերէն ձեռագրաց ժողովածուի № 102, էջ 159-ում (տե՛ս սոյն աշխատութեան 28րդ ծանօթագրութեան մէջ յիշուած «Յուցակը», էջ 168):

(21) «Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տփլիս, 1915, էջ 46–47:

(22) Ա. Գ. Արամիան, «Անանիա Շիրակացու մասնագրութիւնը», Երևան, 1944, էջ 347, 349: «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», Վննեւ տիկ, 1881, էջ 25, 30, Հմմտ. Ն. Աղոյց, ՀՀԱ-

զ) «Վասն ասպարիզաց» (№ 6)⁽²³⁾, որը մի հաղուագիւտ յուշարձան է հայ չափագրական աղբիւրների շարքում»⁽²⁴⁾:

«Գրիք Թղթոց»ի պակասաւոր և թերիկամ վնասուած մասերի վերականգնման տեսակետից առանձնապէս կարևոր են № 1-ի և № 41-ի ներքոյ համարակալուած ընդարձակ գրութիւնները, որոնք հիմնականում գաւառաբանական վէճերի շուրջն են պատուում, սակայն և պարունակում են կարևոր տընեալներ գաղափարախօսական բախումների մասին վաղ Ֆեոդալիզմի շրջանի Հայաստանում:

Արանցից առաջինը (№ 1), այն է «Եստացիք ի Յովհաննու միայնակեցի տեսողի աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վերիացւոց ...», պատկանում է Ե. զարի հեղինակ Մայրուհի (Ղազար) Յովհանն եպիսկոպոսի (Յովհանն Ռուֆուսի) գրչին և յունարէն բնագրում կոչուած է «Պլեւրոֆորի», այսինքն «Արժանահաւատ վկայութիւնք», որը հրատարակել են, համաձայն Լոնտոնի Բրիտանական թանգարանի № 14 650 ձեռագրի 90–134 էջերի, արևելագէտներ Մ. Բրիէրն և Ֆ. Նոն»⁽²⁵⁾: ԺԲ. զարի վերջերում Միջագայլի Ասորի պատրիարքը (1166–1199) մտցրել է այն սամոզլիպպէս իր «Ժամանա-

յատանը Յուստինիանոս կայսեր ժամանակ», Ս. Պ. Բ., 1908, էջ 165–171 (ռուսերէն):

(23) Վերաստանի պետական թանգարանի Տեղեկագիրք, ԺԱ, էջ 49: Նաև՝ «ԱՄՈՒՄ Գրատութիւնների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Տեղեկագիրք», 1949 թ., № 3, էջ 21–43:

(24) Ա. Գ. Արամիան, յիշեալ աշխատութիւնը, էջ 88–89, 115, 185, 196:

(25) Ֆ. Նոն. «Յովհաննու», Մայրուհի եպիսկոպոսի, Պլեւրոֆորի, «Բեւեյլու զը լ'Օրիան կրտսերին», հատ. Գ, 1898, էջ 367 և այլն, նաև առաջինի փարիզ, 1899 (ֆրանսերէն), «Պատրիարքի մասին տալիս», հատ. Ը, պրակ 1 (յունարէն և ֆրանսերէն):

կազմութեան մէջ⁽²⁶⁾, որը առկայ է հին հայերէն թարգմանութեամբ⁽²⁷⁾։ Անկախ սրահից, այս գրութեան, իբրեւ լոկ Յովհան Մայուսեցու երկարակրթութիւն, գոյութիւն ունի և առանձին և այն էլ առնուապէն 3 տարբերակներով, որոնցից մէկն է Վրաստանի պետական թանգարանի № 20/130 օրինակը, էջ 1ա-35ա, միւսը՝ Գերմանական Տիւրինգիենի համալսարանի գրադարանի հայերէն ձեռագրաց հաւաքածոյի № 102 (XIII) էջ 136բ-156բ⁽²⁸⁾, և երրորդը՝ «Գիրք թղթոց»ի մէջ ամփոփուածը, ապագիր տեքստի էջ 510-525։

Սակայն այս 3 տարբերակներից ընդհանրութիւն կայ առաջինի և երկրորդի միջև, որոնք միեւնոյն վերնագիրն են կրում՝ «Յովհաննու մկայնակցի (վար. մակակցի), տեսողի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի վերացող և ալլն», մինչդեռ «Գիրք թղթոց»ի մէջ այն կոչուում է «Բանք խրատականք վասն հաւատոյ, զոր յայտնեալ է Հոգին Սուրբ աստուածածանէր արանք աւգտակարք ի ժամանակ ժամանակ»։

Ինչ վերաբերում է միւս գրութեան (№ 41), այն՝ ինչպէս Վրաստանի պետական թանգարանի № 20/130 ձեռագրում, էջ 173ա-313բ, նոյնպէս և «Գիրք թղթոց»ում, էջ 413-482, միևնոյն վերնագիրն է կրում՝ «Բացառյալստեթիւն համաժայտն աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոյ . . . ասացեալ Սրբոյ վարդապետին Սահակայ կաթողիկոսի և մեծի թարգմանչի՝ Ընդդէմ երկարեակացն Նեստորականացն»։

* * *

Վրաստանի պետական թանգարանի № 20/

(26) «Միքայէլ Աստուծո՛ւ Անտիոքի յակոբիկ պատրիարքի (1166-1189) ժամանակագրութիւնը, անգղանիկ հրատարակութիւն և թարգմանութիւն Քրիստեանքէնի Ժ. Շարլիոյ, հատոր 9, պարսկ 1, փարսիք, 1901, էջ 69-88 (աւստրիէն և ֆրանսերէն)»։

(27) «Ժամանակագրութիւն Տեան Միխայէլի Աստուծոյ պատրիարքի, հանեալ ի ննադոյն գրքաւորէն, Երուսաղէմ, 1871, էջ 176-206»։

(28) Սիւսեմատիկ այրքեանական Մայր ցուցակ Դիւրինգիենի կայսերական համալսարանի գրադարանի։ Ձեռագրեր. ա. արեւեան, ԺԳ. Յուցակ հայերէն ձեռագրերի, հաղմեցին ծրանք Նիկիտաու Ֆիլի և Լեւոն Գեանջեցեան, Դիւրինգիեն, 1907, էջ 167 (գերմաներէն)։

130 ձեռագիրը, ինչպէս և Միքայէլ Աստուծոյ «Ժամանակագրութեան» հայերէն թարգմանութիւնը, հնարաւորութիւն են տալիս վերականգնելու «Գիրք թղթոց»ում «Բանք խրատականք»ի թիրի տեղերը, սկսած վերնագրից։ Այսպէս, օրինակ.

ա. «Գիրք թղթոց»ի էջ 513, տող 5՝
աասաց հայրն սրա սիբեալ մեռեալ ենն,
պիտի կարդացուի՝ աասաց հայրն Ձեմնո, որ
ասի Գ. մեռեանն (ձեռ. № 20/130, էջ 7բ-8ա, Միքայէլ Աստուծոյ, էջ 181)։

բ. «Գիրք թղթոց»ի էջ 514, տող 25-26՝
«և ոչ ևս հաղորդեցաւ մինչև ցմահ մահուան իւրոյ», պիտի կարդացուի՝ «և այլ ոչ ևս հաղորդեցաւ մինչև ցմահ» (ձեռ. № 21/130, էջ 10բ, Միքայէլ Աստուծոյ, էջ 184)։

գ. «Գիրք թղթոց»ի էջ 517, տող 1՝
«Պատմեաց քահանայն Ավփել . . . րացինն»,
պիտի կարդացուի՝ «Պատմեաց քահանայն Աւփիլոս Գեաւարային» (ձեռ. № 20/130, էջ 15բ, Միքայէլ Աստուծոյ, էջ 188)։

դ. «Գիրք թղթոց»ի էջ 520, տող 26-27՝
«Եւ կատարուեմ . . . րացն եկն յայն, զի կաւմեցան հրով փործել . . . հաւանն», պիտի կարդացուի՝ «Եւ կատարուեմ իրացն եղիւ, զի երեկն խնդրեաց հրով փործել զհաւատն» (ձեռ. № 20/130, էջ 23բ, Միքայէլ Աստուծոյ, էջ 196)։

Բացի այս, տարբեր ընթերցումներ են պարունակում մեր ձեռագրի և «Բանք խրատականք»ի (ըստ «Գիրք թղթոց»ի) վերջին մասերը։

Ըստ «Գիրք թղթոց»ի (էջ 525).

«ՅԱնտիոք Աստուծոյ քնտնեալ էր մերձ յարքունիս այր մի սքանչելի, որ սակաւ բանջարով ընդ զպէսս իւր, և չառնոյր ինչ յումեքէ, և էր յոյժ յանդիմանիչ Քաղկեդոնացոցն, և ասէր. Հոս անաւերեւութեան և մահու գայ ինձ ի ձեզ, և ոչ կաւմեմ տանել իրութեամբ։ Եւ սպանին զնա, եւ բազում նեանք եղին ի նմանէ։

Գեաւ եղիւ յԱռնայ Բալաբի քաղաք մի Լեբի, որ ունէր գիր ի հազար ամաց հեռէ, եւ այս եւս գրեալ էր ի նա, երբ Աստուած մարմնով ծնցի ի կուսէ, եւ յաշիւ ծագէ յոյս փառայ նորա ընդ սիբերա ամեմայն։ Եւ Քրիստոսն Աստուծոյ մերոյ փառք յալիսեանս։

Մինչդեռ յիշեալ ձեռագրում սրա փոխարէն կարդացուում է (էջ 34բ-35ա).

«ՅԱՆՈՒՐՔ ԱՍՈՐՈՅ, մերձ յարքունիս, բնակեալ էր ոմն այր սքանչելի, որ ոչ առնոր ինչ յուսեքէ, բայց սակաւ բանջար, որով շնոր զպէտս իւր. և զի սասցիկ եւ յայտնի յանդիմանէր զքաղկեդոնիկոսն, սպանաւ ի նոցանէ քանցանաւ, ևսնգի ասէր նա, քե՛հ՝ Հոտ անաւրէնութեան գայ ինձ համապալ ի սեսանիկն իմ զնոսա և ոչ կարեմ տանիլ լուութեամբ»։

Այս հատուածին մեր ձեռագրում կցուած է յիշատակարան երկասիրութեան հայերէն թարգմանիչներէ թուարկումով, որով, հետեւապէս, ճշգրտում է թարգմանութեան ժամանակը՝ ԺԳ. դարը, իսկ յիշատակարանին անմիջապէս հետեւում է երկասիրութեան «վերջաբանը»։

Յիշատակարանը կարգացում է այսպէս (էջ 35ա)։

«Թարգմանեցաւ յասորոց ի միւս լոյս վարդապետին Վարդանայ աշխատութեամբ և ասորի էրիցու Իշախանուն բանաստեղծութեամբ»։

Հետեւապէս, Յովհան Մայուսեցու կամ, որ նոյնն է, Յովհան Ռուֆուսի գրուածքը թարգմանուել է ասորիներէից Վարդան [վարդապետ]ի և Իշախան երէցի աշխատասիրութեամբ, որոնց համագործակցութիւնը յայտնուի է նաև մի շարք այլ երկերի թարգմանութեան բնագաւառում ԺԳ. դարում (Կիլիկիայում)։

Վերջաբանի բովանդակութիւնն է (էջ 35բ)։

«Այս Պետրոս [եպիսկոպոսն Վերիացոց — Լ. Մ. — Բ.] գրեաց ի հայս և երանեաց վասն ոչ ինելոյ նոցա ի ժողովն [Քաղկեդոնի — Լ. Մ. — Բ.] և ասաց յայտնապէս՝ ի Քաղկեդոն ուրացան զՔրիստոս. դուք պիտի կացէք ի հայրենի հաւատդ, որ շնորհեաց ձեզ ի Տեառնէ և աշխարհիդ ձեր. զի որպէս երբեմն սերմն մարդկութեան աշուստ սփռեցաւ ընդ աշխարհ, նոյնպէս և առ ձեզ պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ. և ի ձէնջ տարածանիւոց է ընդ բազումս. ո՞ղջ իբուք յանասանելի վէմն Քրիստոս, որդեակդ իմ»⁽²⁹⁾։

* * *

Համեմատաբար աւելի զգալի է «Գիրք

Թղթոց»ի վերականգնման ուղիով «Բացառայտութիւն... ասացեալ Մրոյ վարդապետին Սահակայ կաթողիկոսի և մեծի թարգմանչի՝ Ընդդէմ երկարնակացն նետուրականացն»⁽³⁰⁾ ընդարձակ վերնագիրը կրող երկասիրութիւնը, ըստ Վրաստանի պետական թանգարանի No. 20/130 ձեռագրի, էջ 17ա — 313բ (տե՛ս վերնում՝ No. 41 ի ներքոյ), և ըստ «Գիրք Թղթոց»ի տպագրի օրինակի, էջ 413 — 482։

Այստեղ, ի հարկէ, կարիք չկայ ծանրանալու այն հարցի վրայ, թէ ո՞վ է այս գրուածքի հեղինակը, քանի որ հայագիտական գրականութեան մէջ այդ գրուածքի հեղինակն է համարուում Սահակ Գ. Ձուրափորեցին (677 — 703 թ. թ.)⁽³¹⁾։

Եւ ահա այս՝ Սահակ կաթողիկոսի գրուածքն է, որ «Գիրք Թղթոց»ի մէջ զգալիօրէն աղանաղուել է և այժմ որ հինք հնաբանութիւն ունենք աղանաղուած մասերը գրեթէ լիովին վերականգնելուստ Վրաստանի պետական թանգարանի No. 20/130 ձեռագրի։

Ստորև մինք բերում ենք բոլոր այն թերի նախադասութիւնները և տողերը, օր փակագծի մէջ մտցրածը աւելացրած է ըստ յիշուլ ձեռագրի։

Այսպէս, օրինակ՝

ա. «Եւ զի առաջին և վեցին (փոխանակ վերին — Լ. Մ. — Բ.) իմաստութիւնն» («Գիրք Թղթոց», էջ 415, տող 12, մեր ձեռագիրը, էջ 177ա)։

բ. «Եւ փոխանակ [նորա] ի մարդկային մահկանացուն» (Գ. թ. 447, տող 21, մեր ձեռ. 240բ)։

⁽²⁹⁾ Քաղկեդոնիկոսին նետուրական յորհրդեւ մասին տե՛ս Լ. Մկիխսեթ-Բեկ, «Վրաց աղբւրները Հայաստանի և հայերի մասին», Ա, Երևան, 1934, էջ 40. Ե. Տէր-Միխայելան, «Նետուրականութիւնը Հայաստանում», «Պրական-բանասիրական հետախուզումներ», Ա, Երևան, 1946, էջ 175 — 242։

⁽³¹⁾ Ե. Տէր-Միխայելան, «Հայաց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիներին հետ», Էյմիածին, 1908, էջ 290. Նոյն գրեմաներէն, Վայցիթ, 1904, էջ 136, «Տիմոթէոս Գողգի հաւանաութիւնը», Էյմիածին, 1908, էջ XX, ծանոթ. 1. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, «Աղբապատեմ», Ա, էջ 528. Լ. Մկիխսեթ-Բեկ, «Քիւղանական տարեգիր», Ը, Մոսկուա-Լենինգրադ, 1956, էջ 208 — 222 (աւտերէն)։

⁽²⁹⁾ Հմմտ. Արեւալ Տէր-Միխայելան, «Հայաստանեայց եկեղեցին և բիւզանդեան ժողովոց պարագայը», Մոսկուա, 1892, էջ 89, ծան. 1։

4. արՄիածին (Գ. թ. + որդին, որ ա-
ւելորդ է — Լ. Մ. — Բ.) իւր հոտ (Գ. թ.
459, տող 4, մեր ձեռ. 264թ)։

դ. սի [սա[չն հտ զ[իւած[իւն]] վառն կե-
նաց մարդկանն (Գ. թ. 459, տող 4-5,
մեր ձեռ. 264բ):

Ե. աստուծապետա[կանն] Յիսուսը (Դ.
թ. 459, տող 31-32, մեր ձեռ. 266ա):

զ. «Եւ հղովեցաւ ի Պաւլոսէ, որ Քրիստոսի [ւն խաւսէր] և ասէր» (Գ. թ. 468, տող 1-2, մեր ձեռ. 283ա):

է. Անտուած ճշմարիտ ասացին զխաչ-
եալն և [անմահ] անապական (Գ. Թ. 469,
տող 19, մեր ձեռ. 286ա):

ը.՝ «Իսկ որք մարդ համարին զնա [տկար
մահ]կանացու և ապականացու» (Գ. թ.
469, տող 20-21, մեր ձեռ. 286ա)։

Թ. «Ջուրն [ի միմեանս] խառնեալ» (Գ. Թ. 472, տող 24, մեր ձեռ. 292ա):

Ժ. «Եւ գտնի՛մ ասաց, ե [ահա ոչ է] մարգարիտ ե ոչ գանձ, այլ նման է նոցա ե] զ[Բեկ Իյէ նմանին] (Գ. Թ. 477, տող 1-2, մեր ձեռ. 301ա-բ)։

ժա. առչ լին[ի հաց] կենդանական» (Գ.
Թ. 478, տող 14-15, մեր ձեռ. 304ա-բ)։

ԺԲ. Ճիսկ մեք բազարջ հաց[իւն, որ է] անապականութեան նշան, անապական [ե անմահական] և կենդանաբարո (Ի. Թ. 478, տող 15-16, մեր ձեռ. 304ա-բ)։

Միաժամանակ, «Գիրք թղթացւոր 453 (տող 11) - 454 էջերը պիտի վերականգնուեն հետեւեալ ընթերցումով (մեր ձեռ. էջ 252բ - 255բ)։

«... Քանզի դարձեալ ասէ Աթանաս՝ Ազա՛մ զանիւղ մարմինն ի դատապարտու-
թիւնն և յապականութիւնն հարկ. իսկ Քրիս-
տոս զսնապականն և խափանիչ մահու և
փրկանակ մահացելոցս եցոյց. ոչ կարաց
մահ զին[քեմար] ամեն զհոգին Քրիստոսի
և ոչ ապականութիւնն յափշտակիլ կարաց
զմարմինն նորա. զի այս [իմանալ ամ-
պարշտու]թիւնն է (էջ 253ա). զի թէ զմզս
աշխարհի երարձ, [որ է մայր ապա]կանու-
թեան, զիս՞որդ ասեն ոմանք ի մոլ[որելոց
թէ ապա]կանացու էր մարմինն Քրիստոսի:
Արդ տես [հաւաստեալ], զի ամպարիշտոս և
մոլորեալս ի ճշմար[տութեաննն] ասաց զայ-
նոսիկ, որք ապականութեան և մ[ահկա-
նացու]թեան կարծիս առնունն ի մարմինն

Քրիստոսի նախ ք[ան զխաչն], զի մայր մահու և ապականութեան մեղքն են. ի[սկ ուր] մեղք ոչ իցեն, ապականութեան և մահու անհնար [է] երեւեալ. ըստ որում և Բարսեղ կեսարեան ասէ առ Ապողինար. Ոչ փոփոխելի են Քրիստոսն, մի՛ լիցի, զի մի՛ մեղանչու[մն] (էջ 253բ) և ներս մտցէ յանա մեղանչելին, թէ կարասցես գտանել անձնաւոր մարմին յառաջագոյն գոյացեալ և [ապա] միաւորեալ ընդ Բանին Աստուծոյ ի մահ փոխումն. [ապա] թէ գոյուածին մարմնոյն ոչ է առանց միութեան Բանին. զի գոյացեալ զնա միութեամբ Բանին ծանեալ[ս զի՛ խոզ]րես փոփոխումն, զի մարմին և միտք միաւորեալ [Աստուծոյ] Բանին ոչ փոփոխի. ահասնես, զի ամենայն [հարքն] սուրբ ևս մամաձայն յմիտքաց ասացան ոչ [լինել հնար] ապականութեան և փոփոխման մահու, [յոք առանց] մեղաց լինել. իսկ եթէ ապականութիւն կամ] (էջ 254ա) փոփոխումն կամ մահկանացութիւն, յոք ուրեք էլից, անոր՝ հարկէ նախ մեղաց լինել, որ (էջ Կ. Թ. 454) մայրն [է] սոցա և ապա] սոքա ձնուեց նորա. Ապա ուրեմն [քան զսատանայ] և քան զչրեայսն անդէն Հարութեամբ հ[այհոյիչք Քրիստոսի են], որք ապականութեան և փոփոխութեան [և մահկան]ացութեան և կամ այլ ինչ մարդկային տկարութեան կարծիս առնու ի մարմինն Քրիստոսի նախ քան զ[խաչն. զի ըստ] այոց կարծեաց և մեղացն դալ հետ [զոր և ոչ սատանայ] իշխեաց զայս խորհել. զի ասէ՝ Գալ[իլիսնայ աշտարհիս ախորիկ և յիս ինչ ոչ] գտանէ(էջ 254բ) յիւրայոցն և ցոյց[ալայն ասէ՝ Ո՞ր յան]դիմանեսցէ ի ձէնջ զիս վասն [մեղաց, վասն] որոյ սաստկապէս նզովելին գիրք [սուրբք զայսպիս]ի խորհողսն. սակս որոյ ասէ սքանչել[ագործն Կրի]զոր. թէ ոք ասէ փոփոխելի կամ այլ[այլելի զՔրիստոս] և ոչ խոստովանեցի կհոգն հոգւով ա[նխապկան] ի մարմին, որպէս ասէ. զհոգւ է, նզովեալ եղիցի. և դարձեալ զսէն. զիա՞րք ասէ ոք փոփոխելի կամ այլ[այլելի զՔրիստոս] զի ինքն ասէ. Սն նոյն եմ և ոչ փոփոխում. և զարձեալ, թէ ոչ թողաւ անձն նորա ի զժողոս և ոչ մարմնին նորա բաւեալապէս անստեղծ (էջ 255ա) Եւ արդի քուսեցան հետ սասցալաքս ի յան՝ զմահութիւն այնոցիկ, որ ապականութեան

ԵԿԵՂԵՑՈՑ-ՊՆՏՄՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑՈՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն ատեն Արեւիլքի մէջ պիտի սկսէին հաւատալ Հոռոմի անշահախնդրութեան և անոր բաղձանքներուն անկեղծութեան, Մինչև հիմա կը տիրէ այն գաղափարը, թէ Հոռոմի բոլոր ըրածները ճշմարտապէս քրիստոնէական հոգիէն առաջ չեն գար, այլ լոկ ամբարտաւանութենէ և տիրապետելու անյաղ բաղձանքէ, Եթէ Հոռոմ կը յաջողուի Արեւիլքանները իր այժմեան տիրող պրոսթեան հպատակեցնել, ստույգ է որ անկէ արտաքին օգուտներ կը քաղէ, Իր իշխանութիւնը աւելի մեծ կ'ըլլայ, վասնզի բոլոր աշխարհի վրայ տիրապետողի մը կերպարանքը կը ստանայ, Իր ազդեցութիւնը կը կրկնապատկուի, և Նոյնիսկ աւելի գու-

կամ [տկ]արութեան կարծիս առնեն կամ փոփոխման, կամ մահկանացութեան ի մարմինն Քրիստոսի նախ քան զխաչն. [զի] ահա աստուածային զիրք միւսնոյն աւրինակ ասացին [լինել] զՔրիստոս անգիտին իսկ յարգանդէ կուսին և [մինչև ցխ]աչն և մինչև [ց]լաւիտեանս. ըստ որում ասէ Պաւլոս. Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն է և յաւիտեան, Յետ այսր ամենայնի տեսցուք զհարց[եալսն ի ձէնջ], թէ զի՞րոք փոքր տեսակ չափովք [քանակեալ փայ]տ իսպին և զիտակէզն կարողա (էջ 255բ) [նայր տանել] զանբովանդակելին և զամենա[ծախն Աստուած. զի] ահա Տէր Աստուած մեր հոգի ծախիլ է, [Արդ զարմ]աք ընդ անտիղի և ընդ հանդէպ [հարցու]նդ. զի թէ վասն փոքրութեան չափոյն [տակի]ք ոչ կարող [անա]լ տանել. ապա ոչ երկինք և երկիր և ոչ միայն համուռ աշխարհայ արարածք բաւա[կան են տա]նել զնա, թող թէ այս ինչ կամ [այն, որպէս ասէ] Սողոմոն յողաւթն իւր, թէ երկինք և երկինք երկինք չեն քեզ բաւական. զի՞նք առնա այս կարէ տանել զքեզ . . . »:

ՊՐՈՑ. - ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՈՒՄԵՐ - ԲԷԿ

մարներ ալ ձեռք կը ձգէ, այդ տոթիւ յառաջ գալիք բողոքի դատերէն և արտօնութեան խնդրանքներէն, հայրն, Այնպէս որ միշտ պիտի կարենայ ըստել թէ այսպէս վարուած ատեն՝ եսակաւութեան դժուրեւէն առաջնորդուած է, Եթէ Արեւիլքի եպիսկոպոսները Հոռոմէ ճանչցուած ըլլալու համար, հազարաւոր Ֆրանքներ պիտի վճարեն հաստատութեան կոնգակ ստանալու համար, ինչպէս որ պարտաւոր են ընել այժմ Արեւմուտքի եպիսկոպոսները, ի զուրկ աշխատինք Արեւելեաններուն հաւատացնել, թէ հոգիներու փրկութեան համար է որ անոնց միութեանը հոսէ կ'ըլլանք, Իսկ եթէ ընդհակառակն Հոռոմ որոշէ և հաւանի Արեւիլքի հանդէպ իրաց նախկին վիճակը վերանորոգել, և անոնցմէ զանգ մը իսկ ստանալու չհետամտիլ, թիւրեմ այդ կողմերուն արարպետողը երեւալ չկարենայ, բայց ասկէ շատ աւելի մեծ պատիւ մը ստացած կ'ըլլայ, իրացնէ անգին պատիւ մը, Ոչ ոք այն ատեն պիտի կարենայ իր զիտումը մեղադրել, և արեւ պէս լուսաւոր պիտի երևայ, թէ նա ուրիշ բան չի փնտրեր՝ բայց եթէ Աստուծոյ փառքը և հոգիներու փրկութիւնը:

* * *

Բայց տակաւին կը մնայ կարգադրել միութեան խնդրին ամենէն դժուարին կողմը, այսինքն զաւանանքի ատարներէն ելնելը, որոնք զարհիւր ի վեր Եկեղեցիներու միջև կը տիրեն, Ինչպէ՞ս լուծել այդ ստուգապէս ամիսածանր խնդիրը, Հնար է՞ արդեօք որ միութիւն տեղի ունենայ երբ դաւանութեանց տարբերութիւն կայ: Բացարձակապէս պէտք չէ՞ արդեօք որ Լատին Եկեղեցին հրաժարի այդ դաւանութիւններէն, որոնք անազան հոչակուեցան ու հաստատուեցան, և ուսուցուած չէին նախկին քրիստոնէութեան մէջ. կամ թէ պէտք չէ՞ որ Արեւելեան Եկեղեցին ընդունի Արեւմուտքին կազմած նոր դաւանութիւնները, Եկեղեցիներու միջև ճշմարիտ միութիւն մը կամ անկեղծ բարեկամութիւն մը կրնա՞յ արդեօք գոյութիւն ունենալ, եթէ աստուածաբանական խնդիրներու վրայ համաձայնութիւն չըլլայ: Յայտնի է թէ ո՛չ:

Եկեղեցական միութիւնը ամէն ատեն հնթադրած է հաւատոյ միութիւնը: Բայց կրնամք արդեօք յուսացուի որ Եկեղեցինքն մէկը կամ միւսը, իր վարդապետութեան կէտերէն հրաժարի: Արեւելեան Օրթոդոքս Եկեղեցին ստուգապէս զայն երբեք պիտի չընէ: Նա ամէն զաւանութիւնները անփոփոխ պահած է, ինչպէս որ անոնք քարոզիչացան Կաթողիկոսայ Եկեղեցւոյ ամէն անդամներէն, նախնական քրիստոնէութեան ատեն: Նա գլխաւորեալ պիտի չընդունի Արեւմտեան Եկեղեցիին ազանց իր գործակցութեան հաստատած դաւանութիւնները: Ինչ որ նա Փլորինտիոյ մէջ ստորագրեց, յօժարութեամբ չէր, այլ պարագաներէ բռնադատեալ հաւանութիւն յայտնեց, ինչպէս հնար է յուսալ որ Արեւելեան Եկեղեցին դաւանի Հոգւոյն Սրբոյ եւ Սլոյդոյ քրիստոմը, քանի որ նա կը հիմնուի Աւետարանին բառական բացատրութեան վրայ, Եկեղեցւոյ հայրերուն վկայութեան վրայ, Կոստանդնուպոլսոյ տիեզերական ժողովին վճռի վրայ, և ընդհանրապէս ընդունուած հանգանակին վրայ, որոնք ամէնքն ալ ի Հօրէ թղթումէն զատ ուրիշ բանի մասին չեն խօսիր: Նոյնն է ուրիշ շատ մը դաւանական կէտերու մասին ալ, որոնցմով իրարմէ կը բաժնուինք: Լատին Եկեղեցին ալ կրնամք արդեօք իր կողմէն հրաժարիլ հետագայ ժամանակներու դաւանութիւններէն, որոնք կը պատկանին Հոգւոյն Սրբոյ թղթման, կամ մաքրաբանի ցոյցութեան, եւայն: Մտքէ իսկ անցնելու բան չէ. որովհետեւ Լատին միշտ պիտի ըսէ, թէ իր կազմածները հին վարդապետութեան պարզաբանութիւնները կամ ճշգրտանութիւններն են: Բայց արդեօք իրաւացի է որ այս պատճառով բռնադատէ իր Արեւելեան քոյրը, ինչպէս զայն բռնաւազգոյնի և Փլորինտիոյ մէջ: Ո՛չ, և զարծեալ ո՛չ: Որովհետեւ այս կերպով կեղծաւորութիւնը պաշտպանած կ'ըլլայ, և բռնադատած կ'ըլլայ ուրիշները դաւանիլ այն պիտի կէտեր, որոնք անոնց համոզմամբ ճշմարիտ չեն: Ինչ կը մնայ ուրեմն ընել, Կացուցութիւնը յուսահատական չի՞ դառնար արդեօք: Դարեմով վիճաբանութիւնները շարունակուեցան այդ խեղդիրներուն շուրջը, և երբեք չկրցան քայլ մը առաջ տանիլ

միութեան խեղդիրը: Քանի որ երկու Եկեղեցիներու ալ տեսակէտը բացարձակապէս իրաւացի կը տեսնուի, ոչ մին և ոչ միւսը հնար է իրր հերետիկոս ամբաստանել: Ինչ կը մնայ ուրեմն ընել, բայց եթէ համաձայնութեան կերպ մը գտնել:

* * *

Պետք կ'ըլլար ցուցնել և հաստատել թէ, զոնէ շատ տեսակէտներու ներքեւ, հաւատքի իսկական տարբերութիւն չկայ, և թէ երկուքն մէկ եղած տարբերութիւնները՝ առանձնաբանական բանաձեւերու խեղդիրներն:

Այդ պարագային միութիւնը իսկոյն հնարաւոր կը զառնար, և երկու Եկեղեցիներէն իւրաքանչիւրն ալ կրնար պահել իր վարդապետելու և դաւանելու կերպերը, և մէկը միւսին իր դաւանաբանութեան ոճը ստիպողական չէր դարձնար: Ուրեմն Արեւմտեան Եկեղեցւոյն պարտքն է, որ Արեւելեան Եկեղեցիին բացատրէ ու հաստատէ, թէ իր նոր կազմած հաւատոյ վճիռները ուրիշ բան չեն, բայց եթէ հաւանք քրիստոնէութեան մէջ ընդունուած նախընթացներէն քաղուած եզրակացութիւններ: Այն ատեն Արեւելեան Եկեղեցին ալ կրնայ այդ տեսակէտը իրր օրինաւոր և կանոնաւոր ճանչնալ, առանց պարտաւորեալ ըլլալու ինքն ալ միևնոյն կերպով վարուելու և անոր դաւանական վճիռները բարդելու, և այսպէս կրնան երկուքը իրարու հետ հաշտ ապրիլ, և փոխադարձաբար զիրար չզատապիտեալ:

Իրաւ որ հնար չէ Եկեղեցական հաղորդակցութիւն մշակել այն հերետիկոսներուն հետ՝ որոնք սխալ վարդապետութիւններ կը օտարվցնեն: Բայց ինչո՞ւ ներքին պիտի չըլլայ, որ Եկեղեցւոյ մէջ գտնուին այն պիտիներ, որոնք ամենին սուղորութիւն մը չեն վարդապետեր, բայց միանգամայն չեն դաւանիր ամէն կէտերը զորս Արեւմտեան Եկեղեցին այժմ մը վարդապետէ: Անշուշտ հին դարերու սուրբ հայրերը Կաթողիկոս Եկեղեցւոյ տեղաւորներ էին, և նոյնիսկ Եկեղեցւոյ ամենէն մեծ զարդերն էին, բայց այսուհանդերձ անոնք չդաւանեցան, թէ Հօրին Սուրբ կը թի՛ր ի յիւրդոյ, թէ մաքրաբան մը կայ, թէ Սուրբ Կոյսը առանց մեղաց տնտրատ յղացած է, և այլն: Արդ, Արեւելեան Եկեղեցին սակաւին այդ կե-

նոյն կացութեան մէջ կը մնայ, Ան չի մասնակցեցաւ Արեւմուտքի մէջ կատարուած վարդապետական ընդդաշնութեանը, որոնք իրեն համար օտար մնացին և հիմա այլեւս անհնարութեան մէջ կը գտնուի, այդ Արեւմտեան գործողութիւնները ճանչնալու: Թող իրեն իրաւունք տրուի պահել այն դրութիւնը, զոր ունէին նախնի դարերու ստեղծելը: Թող իրեն ներուի փրկութեան հասնել այն հաւաքով, զոր ունեցան մարտիրոսները, և զոր դաւանեցան Եկեղեցւոյ վարդապետները: Աստուածարանական կարծիքներու տարբերութիւններ պէտք չէ որ արգիլեն Եկեղեցիներու միութիւնը:

Պէտք է նշելուի յայտարարեալ, թէ այս կերպ միութիւնը նոր ստեղծուած կամ նոր հաստատուած խնդիր մը չէ, այլ միայն աւելի բացայայտ և աւելի կենդանի ձև մը տալ է այն միութեան՝ որ միշտ եղած էր, և որ երբեք ամբողջապէս կորած չէ: Աւելի լաւ բացատրելու համար կրնանք ըսել, թէ երբեք Արեւելք և Արեւմուտք իրարմէ բոլորովին չբաժնուեցան, այլ միայն ցաւալի պաղովութիւններ և նախանձընդդէմ հակառակութիւններ տեղի ունեցան, և պէտք է որ միութեան կէտերը աւելի ուժովման և յարաբերութիւնները արտաքին և տեսանելի ըլլան: անտեսանելի ըլլալին չի բաւեր: Այս կերպով տեղի կ'ունենայ հաւատոյ միութիւն մը, միեւնոյն աստիճանի վրայ տարբերութիւն մը ինչ ինչ կէտերու վրայ, որոնք մէկուէն կողմէն բացայայտ կերպով ծանցուած կ'ըլլան, իսկ միւսին կողմէն ծածուկ կերպով ճանչցուած, այսինքն, իբր հինէն ընդունուած վարդապետութեանց մէջ լռելեայն պարունակուած կէտեր: Եւ եթէ ապագային տիեզերական ժողով մը գումարուի, ուր ազատաբար հաւաքուին բոլոր ջրիտոնէութեան մասերը, և Արեւելեաններն ալ, առանց բարոյական ճնշում և բռնադատութիւն կրելու, համոզուին Արեւմտեաններուն վարդապետածին ճշմարտութեանը և պաշտօնապէս ընդունին առանց ըսածները, այն աստիճանի Արեւելեան Եկեղեցին ալ կրնայ բացայայտ կերպով ուսուցանել Արեւմտեանին ընդունած ճշմարտութիւնները, ինչ որ ստուգուի փափաքելի և երջանիկ կացութիւն մը եղած կ'ըլլայ:

Ահա թէ ինչ կերպով կ'իմանամ ես եր-

կու Եկեղեցիներու միութեան իստքը: Այդ միութիւնը պէտք է ըլլայ ամէն տեսակէտի ներքեւ ազատ գործողութիւն մը, և ոչ թէ խիղճներու վրայ քողարկուած ճնշում: Այն Ուստի ինչ որ ես միութեան վրայ կը խօսիմ ու կը գրեմ, կ'ուզեմ որ ճիշդ ու ճիշդ այս իմաստով աւելուի: Եւ ոչ Հատիկները կ'ուզեմ խաբել և ոչ Արեւելեանները, կարծեցնել տալով, թէ միութեան գաղափարին ներքեւ բոլորովին տարբեր բաներ կ'իմանամ: Թերեւս այստեղ յայտնած տեսութիւնս հակառակ ըլլայ ասկէ առաջ իմ ըսածներուն և գրածներուն: Բայց որչափ աւելի կը քննուի ու կ'ուսուցանուի միւս խնդիրը, այնչափ աւելի կարծիքները կը փոխուին:

* * *

Այժմ պէտք է քանի մը խօսք ալ աւելցնել այդ նպատակը իրագործելու համար պէտք եղած միջոցներուն վրայ, այսինքն, Եկեղեցիներու արտաքին և տեսանելի միութիւնը իրականացնելու վրայ: Այդ միջոցները իմ կարծիքով շատ պարզ են: Առանց երկու զէնքեր են, շատ հին և ամենուրեւ ծանօթ, այսուհանդերձ շատ քիչ անգամ գործածութեան դրուած: Միեւնոյն այս երկու զէնքերն են որ ամէն կրօնական գործի մէջ ալ պէտք է գործածուին: ասոնց անունն է, Եւստրոսիոս և Սեդ: Ճշմարտութիւնը ամէն մարդ անկեղծաբար կը գոչէ: Բայց այսուհանդերձ շատ ցանցառ կերպով կիրառութեան կը դնէ: Ճշմարտութիւնը պէտք է ճանչնալ ինչպէս որ է, և ուրիշներուն ճանչցնել ինչպէս որ կը ճանչցուի: Ճշմարտութեան վախճալու չէ, ան միշտ գեղեցիկ է և միշտ թագուհի, նոյնիսկ եթէ երբեմն կը վայսցնէ ալ: Ճշմարտութիւնը ճանչնալու մէջ թերութիւնը, միշտ ինքն իրեն վրէժխնդիր կը դառնայ: Իր պատիժը իր մէջն է:

Արեւմուտքի մէջ երբեք մարդ չէ եղած որ վերոյշեալ Արեւելեան խնդիրները խնդրեամբ ճանչնայ, Բան մը աղէկ ճանչնալու և հասկնալու համար, պէտք է ոչ միայն մէկ կողմին ըսածը լսել, այլ և միւս կողմին իստածն ալ մտիկ ընել: Արեւելեան խնդիրը մշակելու համար, պէտք է Արեւելեաններու հոգին ճանչնալ, Արեւելեան Աստուածարաններուն փաստերը լսել,

Արևելեան Սկիզբեցոյ բազմանքները իմա-
նալ, Բայց սրն է բռնուած կերպը: Արև-
մբտեաններ իրենց սենեակին մէջ կը փակ-
ուին, միշտ իրենց գաղափարներով կը սնա-
նին, միւս կողմին փաստերուն դիմաց աչ-
քերին կը փակին, և կ'ուզեն խնդիրը լու-
ծել միմիայն իրենց տեսութիւնաւ վրայ հիմ-
նուելով: Հետեանքը ուրիշ բան չի կրնար
ըլլալ, բայց եթէ կարճատեւ ու նախապա-
շարեալ, և սակայ տնիրաւ դատաստան մը:

Ամենէն առաջ պէտք է փնտռել ճշմար-
տութիւնը, Եկեղեցիներու բաժանման գլո-
բախտ սկզբնաւորութեան վրայ: Յանցանքը
միմիայն Արևելեաններուն վրայ կ'ուզուի
նետել, և նկատի չ'առնուիր Արևմտեան-
ներու կողմէ գործուած սխալներու և յան-
ցանքներու երկար շարքը: Միմիայն փո-
տոսի պակասութիւնները մէջտեղ կը բեր-
ուին, և Քին քննուիր անոր հակառակորդին՝
Նիկողայոս Աւի նամակները, որոնք մեր առջև
կը պարզեն թէ ինչպէս այդ քառանայա-
պետը, իր ամբարտաւան հոգեւոր, իր խորխո-
տանքներովը, Կոստանդնուպոլսոյ եկեղե-
ցին վրայ կատարելապէս տիրապետելու
ձգտումներովը, և զայն Հառիպոյ եկեղե-
ցւոյն մասի մը վերածելու նպատակովը,
նոյնպէս պատասխանատու է բաժանման
առաջ դառն, որչափ Փոտոսը: Միքայէլ
Կերուլարիոս իրաւամբ կը մեղադրուի, բայց
չեն ուսումնասիրուիր իր հակառակորդին՝
Լևոն Թ. պապին նամակները, որոնք լու-
տանքներով լիցուն են, և գիմաղինին հագին
զկծեցուցանելու և զգացումները վերաւորե-
լու համար գրուած: Սովորաբար ուրիշ բան
չի յիշուիր, բայց եթէ պապին նուիրակին՝
Հուսիսիւրոսոս կարտինարին բռնն ընթացքը
և յախուռն ոգին, որոնք ստոյգ իրաց վի-
ճակը բարեոքելու միջոցներ չէին: Եթէ ես
ալ Արևելեան խնդրին վրայ դասախոսու-
թեանցս մէջ՝ այդ կէտերը չ'ընտելի, պատ-
ճառը այն է, որ տակաւին լաւ կիրպով
ուսումնասիրած չ'էի այդ պապերուն նա-
մակները:

Երբեք Արևմտեաններ այնքան առաջ
կ'երթան ըսելու, թէ Արևմուտք մեծամեծ
բարիքներ ըրած է Արևելքին: Եւ ամենե-
ւին մտադրութիւն չեն դարձներ, որ Արև-
մբտեան ազգերուն, նոյնիսկ պապութեան
ալ ձգտումներն ու քաղաքականութիւնը

ուրիշ բան չէին, բայց եթէ միշտ, գոնէ
վերջին ժամանակներուն մէջ, Արևելքի
գէմ ուղղուած թշնամութիւններ: Կը մոռ-
նան իսկ, թէ Կաթողոս Մեծը պատկերու հա-
մար, հարկ եղաւ պաշտօնապէս կործանել
Բյւզանդական գահը, և թէ մինչև իսկ Յոյն
վեհապետներուն ուղեցնին զլաւալ անոնց
հնաւանդ ռոմիկական կայսր տիտղոսը: Ձեռն
յիշեր թէ Բյւզանդիոնի կայսրերուն գէմ
պատերազմներ մղուեցան, և թէ Իտալիոյ
մէջ ունեցած օրինաւոր ստացուածքները
յափշտակուեցան Կոստանդնուսիոսեան սուտ
տըւելութեան պատրուակին վրայ հիմնուե-
լով: Կը մոռցուի ևս թէ կործեցեալ իմա-
չակիրներն եղան, որ Արևելեան կայսրու-
թիւնը կործանեցին, Յունաստանը նուաճե-
ցին և դարբնու տեղողութեամբ զայն ճնշե-
ցին և ստրկացուցին: Կը մոռցուի նոյնպէս,
որ իննովկէնսիոս Գ. պապին հրամանով,
առանց խղճահարութեան յափշտակեցին Յոյ-
նիւն և եկեղեցական ստացուածքները, ու
անոնց եկեղեցիները Հատին եկեղեցիներու
վերածեցին: Յոյն եպիսկոպոսներ իրենց ա-
թոններէն վնասեցին, նոյնիսկ բազմամեայ
թեմակաները:

Պէտք է ճշմարտութիւնը ճանչնալ դա-
ւանական տարբերութեանց մասին ալ, և
եթէ կ'ուզուի այդ գետնին վրայ համաձայ-
նութեան մը յանգիլ, պէտք է նախապէս
իրաց կացութիւնը գիտնալ, թէ ինչ և ինչ-
պէս է:

Բայց ահա ճիշդ այս կէտն է, որ միշտ
զանց եղած է:

Այդ խնդիրներուն վրայ շատ գրուած է,
և մասնաւորապէս Հոգւոյն Սրբոյ բղխման
և բաղարջ հացի կիրարկութեան համար, որ
Միջին դարերուն իբր վարդապետական
կէտ մը նկատուած էր, և ոչ իբր պարզ
եկեղեցական բարեկարգութեան վերաբեր-
եալ խնդիր մը: Այդ մասին ալ կը պահելին
հակառակորդներուն տեսութեանց և իսկա-
կան զգուարութեանց ծանօթութիւնները:
Իւրաքանչիւր կողմ խնդիրը իր տեսակէտէն
նկատի կ'առնէր իր ուղած կերպով կը պատ-
ճառարանէր, և երկու կարծիքներուն հա-
մաձայնութեան գալը միշտ անհնարին կը
դառնար:

Թրգմ. Մ. Ա. Օ.

(Շարունակելի՝ 3)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

“ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ

ՀԱՄԱՄԱՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵՋՈՒՆԵՐԻ”

ՆԵՐԱԶՈՒԹԻՒՆ

ՀՐԱՋԱՅԱՑ ԱՅԽԱՆԱՆ — ԵՐԵՎԱՆ — 1955, էջ 665

3. — Պրեքոմեթեմ, որ այժմ կը խոսուի Ֆրանսայի Պրեքոմեթ գաւառի զիւղերուն մէջ. ծանօթ է մեզի Ցրդ դարէն՝ քանի մը բառացանկերով, իսկ 14րդ դարէն՝ գրական հատուածներով: Պրեքոմեթէն կալիբրէնի մնացորդը է, այլ Տրդ դարուն Մեծն Բրիտանիայէն արշաւող սաքսոնական գաղթողներու լեզուն է: Տես J. Loth, Chrestomathie bretonne, Paris, 1890; E. Ernault, Glossaire moyen-breton, Paris, 1895-96; M. Guyasse, La langue bretonne, Quimper, 1936; Ph. Le Roux, Atlas Linguistique de la Basse-Bretagne, 1924.

4. — Կալիսկան (gaélique կամ goide-lique, goél կամ gal բառէն, որ celt = կելտ բառն է և որմէ հայերէն քաղիացի): Հասած է մեզի 4րդ դարէն՝ օգամական արձանագրութիւններով, որոնք շատ կարճ են և քիչ նիւթ կը հայթայթեն. կան նաև բազմաթիւ իրանտական բառացանկեր 7րդ դարէն սկսեալ և աւելի վերջ իրանտական բառական ճոխ զբաղանութիւնը: Ասոնք կը ներկայացնեն հին իրանտերէնը, որ ունի հարուստ և հնամիճակ հոլովում: Այս խումբէն այժմ կենդանի են հետեւեալ լեզուները.

1. — Իրլանդերէն, որ Իրլանտայի լեզուն է:

2. — Սկոթերէն, որ Սկոթլոյդ կաշկական լեզուն է:

3. — Մաներէն, Ման կղզիի լեզուն, Անգլիոյ և Իրլանտայի միջև:

Կելտական լեզուները ծանօթ են մեզի ուշ ժամանակէն և անկատար ձեռով, առանց կանոնաւոր զբաղանութեան, գլխաւորապէս բառացանկերով, այնպէս որ արդիւնքը լեզուաբանութեան համար անշնչն է և յաճախ անստորգ: Տես C. Borgstrom, The Dialect

of Barra (Norsk Tidsskrift for Sprogvid, VIII, 1936, էջ 71); N. Holmer, Studies on Argyllshire Gaelic, 1938; J. Vendryes, Grammaire du vieil-irlandais, Paris, 1907.

Բ. — Սեմական Ընտանիք. — Այս լեզուախումբին պատկանող լեզուները կը տարածուին այժմ Հիւսիսային Աֆրիկէի արեւմտեան եզերքէն մինչև Պարսկաստանի արեւմտեան սահմանները: Հեզուաբանները նախ անոնց նախահայրենիքը Միջագետքը կը համարէին, բայց այժմ Արաբիան կը նկատեն: Արաբիան, որ այժմ մեծ մասամբ անապատ է, նախապէս բարբեր երկիր մըն էր, որ երեք մեծ գետերով ոռոգուած էր և կ'ապրեցնէր բնական հոծ բնակչութիւն մը: Գետերը հեղահեղ ցամաքացան և երկիրը անապատ դարձաւ: Այսպէսով սկսաւ սեմական ժողովուրդներու դաղթը նախապատմական շրջաններուն զէպի Բաղդէաստան, Ասորիք, Եթովպիա և Ոգլպոսոս: Արաբիոյ նապատի վերածուելուն զուգընթաց, դաղթը կ'աւելնար և կը զարգանար: Այն երկիրներուն մէջ ուր նորեկները հաստատուեցան, նոր ժողովուրդներ կազմեցին. այսպէս կազմաւորուեցան քաղղէացիները, ասորիները, փիւնիկեցիները, եթովպացիները և արաբները: Տես Marcel Cohen, Essai comparatif sur le vocabulaire et la phonétique du chamito-sémitique, Paris, 1947; Carl Brockelmann, Grundriss der Vergleichenden Grammatik der semitischen Sprachen, Berlin, I, 1908, II, 1913.

Սեմական ընտանիքը կը պարունակէ հետեւեալ լեզուները.

1. — Աֆամերէն. այս այն լեզուն է, զոր Ն. Ք. 4000 տարի առաջ սեմական գաղութ մը բերաւ Արաբիայէն զէպի Տիգրիսի հովիտը, նուաճելով և ձուլելով տեղացի սուսմերները. եկուոր սեմականները հիմեցին երկու մեծ պետութիւն՝ Ասորեստան և Բաբելոն, որոնց քաղաքական և մշակութային նշանակութիւնը ակնյայտ է: Աքքադերէնը այս երկու երկիրներու լեզուն է, որ իր կարգին կը բաժնուի ասուրերէնի (Ասորեստանի լեզուն) և բաբելոնէնի: Այս երկու բարբառները ծանօթ են մեզի հազարաւոր բնեւագիր արձանագրութիւններով, որոնց հնագոյնը Ն. Ք. 3000 թուականն է: Լեզ-

ուարաններ յաջողած են զանազ Ժեկնել առանց մեծ գիտաբուծականներու: Իբրեւ մշտական լեզու, աքթատերէնը է մնացած միայն Ասորեստանի և Բաբելոնի մէջ, այլ գործածական եղած է նաեւ Փարսի, Ասորիքի և Եգիպտոսի մէջ գլխաւորապէս իբրեւ ուսումնական լեզու և մասնաւորապէս դրեւանգիտական յարաբերութիւններու ծառայող իր ժամանակի միջազգային լեզուն: Նիւնուէի անկումը՝ 606 թուականին Ն. Ք. և Բաբելոնի անկումը 539 թուականին Ն. Ք. աքթատերէնի վարկը կտորեցին: Իբրեւ գիտական լեզու ան շարունակեց մնալ հազիւ մինչև քրիստոնէական թուականը, որմէ վերջ տեղի տուաւ արամեերէնին՝ քոյր ասպարէզներուն մէջ: Տես Friedrich Delitzsch, *Assyrische Grammatik*, Berlin, 3րդ հրատ., 1906; A. Ungnad, *Babylonisch-assyrische Grammatik*, 3րդ հրատ., Munich, 1949; G. Ryckmans, *Grammaire accadienne*, Louvain, 1938; René Labat, *Manuel d'épigraphie akkadienne*, Paris, 1948.

2. — Քանաներէն. Պաղեստինի հին լեզուն է, որմէ միայն կարգ մը բառեր աւանդուած են մեզի Ն. Ք. 1400 թուականներէն, բեւեռագիր թղթակցութիւններու մէջ: Տես Zelig S. Harris, *Development of the Cananite Dialects*, New Haven, 1939.

3. — Մովաբերէն: Այս լեզուն, որ երբայերէնի շատ մօտիկ է, կը մնայ միայն արձանագրութիւն մը Ն. Ք. 9րդ դարէն՝ Մովաբցիներու Մեշրա թագաւորին կողմէ:

4. — Փիւնիկերէն. շատ մօտ է երբայերէնին: Կը խօսուէր Փիւնիկիի և իր բազմաթիւ գաղութներուն մէջ՝ Կիպրոս, Կարթագին, Սիկիլիա, Սարտինիա, Մալթա, և այլն: Այս լեզուն կը մնան բազմաթիւ արձանագրութիւններ, որոնց հնագոյնը Ն. Ք. 9րդ դարէն է: Նոր պեղումներ երեւան հանեցին բեւեռագիր տառերով գրուած խումբ մը արձանագրութիւններ, որոնք փիւնիկերէնի հնութիւնը հասցուցին Ն. Ք. 14րդ դարուն: Փիւնիկերէնը անհետացաւ տեղի տալով արամեերէնին, Ն. Ք. առաջին դարէն առաջ: Բայց Կարթագինի մէջ շարունակուեցաւ մինչև 4րդ դարը Յ. Ք. և ա՛լ աւելի ուշ, մինչև արաբներու արշաւանքը, երբ արաբերէնի մէջ ձուլուելով՝ վերջնականապէս անհետացաւ: Տես Johannes Friedrich, *Phönizisch-punische Gram-*

matik, Rome, 1951; M. Dunand, *Byblia Grammata*, Beyrouth, 1945.

5. — Եբրայերէն, Հրեաներու լեզուն է: Հրեաները Պաղեստին գաղթած են Ն. Ք. 13րդ դարու վերջերը: Այս լեզունով գրուած են Աստուածաշունչը և քանի մը արձանագրութիւններ: Աստուածաշունչի հնագոյն հատուածները կը համարուին Ն. Ք. 1000 թուականէն, իսկ մեծագոյն մասի խմբագրութիւնը կատարուած է Ն. Ք. 9-7րդ դարերուն, այսինքն Դաւիթէն և Սողոմոնէն անմիջապէս յետոյ: Երգ դարուն՝ Երուսաղէմը կործանեցաւ, հրեաները Բաբելոն գերի տարուեցան և եբրայերէնը մեծագոյն հարուածը ոտացաւ: Հրեաները Բաբելոնի մէջ արամեերէն սորվեցան, բայց չուոճան իրենց լեզուն, որ գերութենէ վերադարձին՝ Ն. Ք. 538 թուականին, տակաւին կենդանի էր Պաղեստինի մէջ: Հելլենական ազդեցութեան ներքև, եբրայերէնը կը սկսի անհետանալ և 332 թուականին, երբ Պաղեստինը նուաճուեցաւ Ալեքսանդրի կողմէ, այնու եբրայերէնը մեռաւ և անոր տեղ տիրեց արամեերէնը: Հրեաները ցրուելով Յուդական կայսրութեան զանապահ կողմեր, մայրենի լեզուի վերածնելին յունարէնը, այնպէս որ կրօնական գիրքերը յունարէնի վերածնելու պահանջը կար: 3րդ դարուն, Աստուածաշունչը Ալեքսանդրիոյ հրեաներուն ձեռքով յունարէնի թարգմանուեցաւ՝ որ է Յօթանասնից թարգմանութիւնը: Հրեաները ուր որ գացին, ընդունեցին տեղական լեզուն, բայց կրօնական արարողութիւններուն մէջ պահեցին միշտ եբրայերէնը, զոր կ'ուսանէին և կը գրէին: Յ. Ք. առաջին երկու դարերուն խմբագրուեցան Միշնան, Քալաթաը և այլ կրօնաիրաւաբանական կանոնագրքեր, որոնց լեզուն յաճախ կը կոչուի նոր եբրայերէն, կամ թալմուտերէն և կամ միշնայերէն: Այժմ, Իսրայէլի մէջ, վերակենդանացած է եբրայերէնը իբրեւ պետական լեզու: Սաւարական արամեերէնը կը խօսուէր և կը գրուէր սամարացիներուն կողմէ Ն. Ք. 400 թուականէն մինչև Յ. Ք. 600 թուականը, շուրջ հազար տարի, Պաղեստինի մէջ: Տես D. Düringer, *Le inscriptions antiques-ebraïques Palestinesi*, Florence, 1934; G. Bergsträsser, *Hebräische Grammatik*, Leipzig, I, 1918,

II, 1929; Paul Joüon, Grammaire de l'hébreu biblique, Rome, 1923; Mayer Lambert, Traité de grammaire hébraïque, Paris, 1938; Jewish Encyclopedia, New-York, 1901-6 & Encyclopädia Judaica, Berlin, 1938.

6. — Արամերկն: Արամացիները թափառական մանր ցեղեր էին, որոնք կը թափառէին Արարիոյ հիւսիսային կողմէն մինչև Պաղեստինի, Սուրիոյ և Բաբելոնի սահմանները: Անոնք երբեք մեծ պետութիւն մը չկազմեցին իրենց թափառական կեանքին մէջ. ոմանք հաստատուեցան Եդիսիա, Դամասկոս, Բալթիր ևայլն, ուր հետզհետէ սկսան խառնուիլ տեղական ժողովուրդներուն հետ: Արամացիները մեծ գաղութ մը ունէին Հայաստանի և քրտական լեռներու հարաւակողմը, սմբողջ Տիգրիսի շրջանին մէջ, որ կոչուեցաւ Արամի երկիր. պարսկերէն՝ Suristān: Ասորեստանի և Բաբելոնի մէջ, արամացիները մեծամասնութիւն կը կազմէին: Արդ, արամերէն մէկ լեզու մը չկայ, այլ կան զանազան բարբառներ: Այս բարբառները, սակայն, հնութեան մէջ մեծ նշանակութիւն ունեցան իբրեւ քաղաքակրթութեան լեզու: Արամացիները դարձան պետական պաշտօնեաներ Ասորեստանի, Բաբելոնի և Պարսկական կայսրութեան մէջ. երբ պարսկիները նուաճեցին ասորեստանցիներու և բաբելոնցիներու պետութիւնը, արամերէնը դարձաւ պետական կամ պաշտօնական լեզու: Ն. Բ. Տրդ դարուն, արամերէնը դարձաւ միջազգային առևարական և դիւանագիտական լեզու և կամայ կամաց գործածութենէն վտարեց քաղաքները, փրնիկներէն և եբրայերէնը և բռնեց անոնց տեղը: Տարօրինակ երևոյթ. խոշոր կայսրութիւն մը իր վարչական գործառնութիւնները կը կատարէ իր նուաճած հպատակ ժողովուրդի մը լեզուով, որ ո՛չ ազգեցիկ զիրք ունի և ո՛չ այ փառաւոր զրականութիւն: Բայց, պարսկիները ստիպուած էին դիմելու այսպիսի միջոցի մը, որովհետեւ պարսկական բնեւորակները թուղթի վրայ չէին գրուեր, այլ միայն կ'արձանագրուէին. տակաւին, իշխանները ոչ կարգաւ գիտէին և ոչ գրել, կարելի էր այնքան բազմաթիւ զգիրներ գտնել: Արամացիները միայն լրացուցին այս պայմանները, ունենալով գրելու հա-

մար զիւրին այբուբեն մը: Այսպէսով, արամերէնը մրցակից հանդիսացաւ յունարէնի և կասեցուց անոր տարածումը Արևելքի շատ մը երկիրներուն մէջ: Քրիստոնէական շրջանին, ան դարձաւ աստուածաբաններու լեզուն և դարձեալ մեծ գիր խաղաց Արևելքի քրիստոնեաներուն մէջ՝ որոնց կարգին նաև հայերուն, կրօնական և ուսումնական դաստիարակութեան գործին մէջ: Տևեց մինչև 650 թուականը, երբ արաբերէնի առջև կամաց կամաց տեղի տուաւ: Արամերէնի զանազան ձևերէն նշանաւոր են.

ա. — Ասորիքի մանր իշխանութիւններու գործածած լեզուն, որ առանգուած է մեզի ն. Բ. Տրդ դարէն և բոլոր արամական յիշատակարաններու մէջ ամենահինն է:

բ. — Եդիպոսի արամերէն, զոր կը խօսէին Եդիպոսի հիւսիս գաղթականները. այս լեզուով գրուած են Ս. Գրքի որոշ մասերը՝ Նեբրաս, Դանիէլ:

գ. — Պաղեստինի արամերէն, զոր կը գործածէին նոյն երկրի հրեաները, սամարացիները և քրիստոնեաները. այս բարբառով գրուած են Թարսիումը, սամարացիներու Հնգամատեանը և միջբիզնիսը աւետարանը. նմանապէս յունարէն աւետարանի մէջ մտած են կարգ մը արամական բառեր: Այս բարբառը ջնջուեցաւ Ծրդ դարուն՝ տեղի տալով արաբերէնին:

դ. — Նապաթերէն, որով կը խօսէին նապաթացիները. այս ժողովուրդը կը տարածուէր Հրէաստանի հարաւէն սկսած դէպի Արաբիա. յիշուած է ն. Բ. 4րդ դարէն և արաբ կը համարուի: Անոնք շրդ դարուն առանձին թագաւորութիւն մը կազմեցին, որ կը տարածուէր հիւսիսէն մինչև Դամասկոս, հարաւէն մինչև Հիճազի սահմանները: Անոնք կարեւոր դեր մը խաղացան իբրև միջնորդ Արաբիոյ և Արեւմուտքի միջև: Հռովմայիցիները պայքարեցան անոնց դէմ և 106 թուականին պաղեստինի Բեթրա մայրաքաղաքը, Թէ և Նապաթացիները արաբ կը համարուին, բայց անոնց լեզուն արամերէն է և նոյնիսկ կը ներկայացնէ արամերէնի հնագոյն ձևերը: Կրած է սակայն արաբերէնի կազմեցութիւնը:

ե. — Բալթիրերէն, կը խօսուէր Բալթիրայի ժողովուրդին կողմէ: Բալթիրան Պարսից ծոցէն մինչև Միջերկրական ձգտող կարաւան-

նեբուս գլխաւոր կեդրոնատեղիին էր և մեծ նշանակութիւն ունէր՝ իբրեւ առեւտրական կեդրոն Ն. Ք. Առաջին դարուն. կործանեցաւ 273 թուականին՝ Հռոմ պայքերէն ետոք. այնուհետեւ ժողովուրդը քիչ քիչ արարացաւ։ Բայժրայի և Տուրայի մէջ գտնուած են զանազան արձանագրութիւններ, որոնք գրուած են մասնաւոր այբուբենով մը, որ սեմական ծագում ունի և նման է փրնիկ-հանին։

զ. — Լիբանանի արամեերէն, որ թէ՛նք բնաւ գրականութեան չէ բարձրացած, բայց աւելի երկարօրէն գրեալորած է արաբերէնին (գիտալսօր ալ կան երեք գիւղեր, ուր կը խօսին այս լեզուով)։

է. — Ասորեստանի եւ Բաբելոնի արամեերէն, որ պարսից պետութեան տրապետութեան յոյնիսկ պաշտօնական լեզու դարձաւ։ Ը. — Ասորեերէն, որ եգիպտոյ կամ Ուռ-հայի արամեերէնէն էր։ Այս շրջանը Ն. Ք. 136 թուականէն մինչև Յ. Ք. 217 թուականը անկախ պետութիւն էր։ Եգիպտական պորոցին մէջ արամեերէնը շատ մշակուեցաւ և երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ այս կողմերը, Եգիպտոյ արամեերէնը դարձաւ քրիստոնէական քարոզչութեան պաշտօնական լեզուն այն բոլոր ժողովուրդներուն համար, որոնք ցրուած էին Միջերկրական եղերքէն մինչև Պարսկաստանի լեռները։ Այս լեզուով Ս. Գիրքը թարգմանուեցաւ Չրդ դարուն և կը կոչուի Փոքրիկ։ Ճոխ գրականութիւն մը ստեղծուեցաւ, մանաւանդ Չրդէն մինչև 7րդ դար, որով դաստիարակուեցան Արեւելքի զանազան ժողովուրդները։ Եւրոս արալ այս լեզուն կը սորվէինք և այս լեզուով կը կարդայինք Ս. Գիրքը մեր եկեղեցիներուն մէջ, մինչև Մեսրոպ Մաշտոցը։

Թ. — Մանսայերէն. իրանական հաւատալիքներով խառն արամական համայնքի մը լեզուն է, որ կը քնայ մինչև այսօր։


Ժ. — Նոր ասորեերէն. ասորիներու կենդանի լեզուն է Ուրմիոյ, Միջագետքի և Հայաստանի մի քանի գիւղերուն մէջ։ *Stu* Hans Heinrich Schaefer, *Iranische Beiträge*, I, Halle, 1930; A. Dupont-Sommer, *Les Araméens*, Paris, 1949; Hans Bauer und Pontus-Leander, *Grammatik des Biblisch-Aramäischen*, Halle, 1927.

7. — Արաբերէն. Արաբիոյ զանազան ժողովուրդներուն խօսած լեզուն է. ունի զանազան բարբառներ։ Մուսուլմաններն առաջ, արաբները ունէին գեղեցիկ բանաստեղծութիւններ. յոյն լեզուով, որ Մէքքէի մէջ խօսուած արաբերէնէն էր, գրուեցաւ Ղուրանը՝ է. դարուն։ Այնուհետեւ, այդ լեզուն մնաց իսլամներու՝ պաշտօնական լեզուն. մահմետական կրօնի համաձայն, արդիւում ըլլալով Ղուրանը այլ լեզուի թարգմանիչ, ան մնաց միակ գրական լեզուն։ Ոչ մէկ ուրիշ բարբառ գրականութեան բարձրացաւ։ Իսլամներու և արաբական աշխարհակալութեան հետ արաբերէնը տարածուեցաւ շատ հեռուները, Սպանիայէն մինչև Ճափա կղզին. այս տարածմամբ թէ՛նք յատկացան բազմաթիւ բարբառներ. բայց գրական լեզուն մնաց միեւնոյնը՝ Ղուրանի սրբազան լեզուի պատճառով։ Արաբալեզու սրբականութիւններէն մէկն է և մեծ չափերով ազդած է ուրիշ՝ մանաւանդ իսլամ ժողովուրդներուն լեզուներուն վրայ։ Սպանիերէնը, թուրքերէնը, պարսկերէնը, քիւրտերէնը, աֆղաներէնը, հինդուստաներէնը, մալայերէնը և այլ լեզուներ լեցուն են արաբերէն փոխառութիւններով։ Արաբերէն գրական լեզուն չափազանց հարուստ լեզու մըն է, որու ճոխութեան նպաստած են ոչ միայն ուսումնականներու յօրինած բազմաթիւ բառերը, այլև զանազան բարբառներէն ներմուծուած տեղական բառերը։ Այս բարբառներէն նշանաւոր են՝ Հիճազի, Եմենի, Պաղատտի, Ասորիքի, Եգիպտոսի, Մարոքի, Ալճերիոյ, Թունիզի և Թրիբոլի բարբառները։ Հետաքրքրական են Մալթայի քիւսոնցեաներու արաբերէնը, որ կը գրուի լատինական տառերով. անալուզերէնը, որ Սպանիոյ մէջ խօսուած ու գրուած արաբերէնէն էր 8–16րդ դարերուն. հասանի, որ Մորիթանիոյ մէջ խօսուած արաբերէնէն է և ծառայելով իբրեւ միջազգային լեզու պէրպէր և սուտանցի զանազան ժողովուրդներուն միջև, հետզհետէ կը կլանէ տեղացիներու բնիկ լեզուները։

ԱՆՈՒԴԵԱԻԱՆ, ՎՐԴ. ՉԴԱՆԵԱՆ
(Շարունակելի՝ 14)

ԻՄԱՍՏԱՄԻՐԱԿԱՆ

Ս. Է. ՈՒԱՅԹԵՔԸՐ



Տեսութիւններ Տիեզերքի Մասին

և

Փաստեր Աստուծոյ Գոյութեան

ԳԼՈՒԽ Ե.

ԱՐԴԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՍԿԶԲՆԱԽՈՐՈԹԻՒՆԸ

ԺԲ. և ԺԳ. դարերուն, բազմաթիւ նոր գրութիւններ եկան աւելնալ արդէն իսկ ծանօթ դասական գրութիւններու կամ թարգմանութիւններու ցանկին վրայ: Միջին Դարու սկզբնաւորութեան, քիչ թիւով փիլիսոփայական կամ գիտական գրութիւններ միայն տրամադրելի էին, եթէ բացառութիւն նկատենք Պղատնիք «Տիմէոս»ը, յատկին թարգմանութեամբ, Արիստոտէլի տրամաբանական հեղինակութիւններէն երկուքը՝ «Սոտոպոլիքս»ը և «Ցաղապս Մեկնութեան»ը, թարգմանուած Պոէսի կողմէ, ինչպէս նաեւ վերջինիս հեղինակութիւնները թուաբանութեան, երկրաչափութեան և երաժշտութեան մասին. ապա, մտածման մեծ վարպետներ, ինչպէս Մեծն Դրիզոբը, տրամադրի չէին բնաւ մեծ կարեւորութիւն ընծայելու նման ուսումնասիրութիւններու: 1120ի մօտերը, Պաթեցի Ատելար անուն անգլիացի վանականը ծնուցանցուց Գորտովայի մէջ Սրաբերէն հրատարակութիւն մը նւկլիտէսի «Տարրեր»ուն և թարգմանեց զայն լատիներէնի: Այս գրութիւնը, ինչպէս նաեւ Ալտոարիզմի

«Ալմեպրայ»ին թարգմանութիւնը՝ կատարուած 1145ին Ռուզլը Տը Զեսթրի կողմէ՝ մեկնակէտը եղան արդի մշտնադիտ գիտութեան սկզբնաւորութեան: Շփումը իսլամ գիտնականներու հետ, որոնք նախընտրած էին միշտ հետեւիլ Արիստոտէլականներուն փոխանակ Պղատնիք, առթեց մինչեւ այն ատեն Արեւմուտքին անծանօթ մնացած Արիստոտէլի գործերուն յայտնութիւնը: ԺԲ. դարու երկրորդ կիսուն և ԺԳ.ի առաջին տարիներուն, Արիստոտէլի գործերուն մեծ մասը, ներառեալ «Բնագիտութիւն»ը, իրենց մուտքը գործեցին, թարգմանուած ըլլալէ ետք յունարէն ընագրէն ասորերէնի, ասորերէնէն արաբերէնի, արաբերէնէն երրայեցներէնի և վերջապէս՝ երրայեցներէնէն լատիներէնի: Ժամանակ մը ետք յունարէն ընագիրը հասկնալի եղաւ և թարգմանութիւնները սկսան կատարուիլ ուղղակի ընագիրէն:

ԳԼՈՒԽ Զ.

ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԲՆԱԿԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Յաճախ առիթը պիտի ունենանք յիշելու Արիստոտէլի ընագիտութիւնը և տիեզերագիտութիւնը. այդ իսկ պատճառաւ յարմար նկատեցինք անդրադարձնալ անոնց այստեղ: Մեր ներկայ ուսումնասիրութեան համար Արիստոտէլի ներկայացուցած կարեւորութիւնը կը հետեւի այն իրականութեան՝ որ Աստուծոյ գոյութեան համար ներկայացուած փաստերը Միջին դարուն բանածնութեան դարաշրջանի մը, երբ Արիստոտէլեան գաղափարները տիրապետող էին և անոնց ազդեցութիւնը անհետացած չէր տակաւին: Հասարակ մարդուն և քաղաքակրթութեան մարդուն աշխարհը տեսնելու ձեւը կը ներփակէ տակաւին տարրեր, որոնք, վերջէն քննութեամբ, կուզան Արիստոտէլէն ու որոնք, երբեմն, զժուարտութիւններ կը ներկայացնեն: Արիստոտէլի բոլոր մտահայեցողութիւնները ընութեան մասին տիրապետուած էին «Վախճան»ի (τέλος) գաղափարով: Ան կը կիրարկէր այս, գաղափարները՝ անկենդան իրերուն, բնական թէ իրարեանիւր մարմին ունի էութիւն մը կամ յատուկ ընութիւն մը — γένος —,

որ կ'իշխէ իր ընթացքին վրայ եւ կը ստիպէ զինք փնտռելու որոշ տեղ մը եւ որոշ պայմաններ. այսպէս, երկրային մարմինները կը ձգտին դէպի վար, մինչդեռ ամէն ինչ որ կրակ է՝ դէպի վեր: Ան կ'ըմբռնէր շարժումը իրեն ղեկավարող որպէսզի էութիւնն մը իր ներքին վախճանին — նպատակ — հասնի. որքան առնէ որ այդ վախճանը իրագործուած չէր, այդ էութիւնը կը կոչուէր ի զօրութեան — δυνάμεις — եւ, երբ կրագործուէր՝ ի լինելութեան — ἐνέργεια կամ ενεργεία — այնպէս որ շարժումը վերածումն է ի զօրութեան փոփոխութեան ի լինելութեան փոփոխութեան:

Այս իմացքները շատ հեռու են Նիւթրնի տեսարանութեան մշակած շարժման օրէնքներէն, որոնք նոյն են նիւթական բոլոր առարկաներուն համար: Բայց պէտք է նշել թայտեղ հիմնական տարբերութիւն մը Արիստոտէլեան եւ արդիական տեսակէտներուն միջեւ: Արդիական քնարանական փոխտոփայտութիւնը հիմնուած է վարկածի մը վրայ որ կ'ընդունի նիւթական տարրական մասնիկներու տարբեր տեսակներ — ելեքտրոն, բրոն, ռոմբրոն, բոգիթրոն, եւայլն —, եւ կը վստահեցնէ թէ քնագիտութեան տիեզերքը իր ամբողջութեանը մէջ ամբողջապէս հասկնալի է երբ ծանօթ ըլլան տարրական մասնիկներուն դիրքը եւ շարժումները, տարրալուծումը միջուկներու եւ ամոնիւնիւրու, ամոնիւնիւրու արագութիւնը եւայլն: Մինչդեռ Արիստոտէլ կը մտածէր, ընդհակառակը, թէ կարելի չէ ամէն փոփոխութիւն բացատրել միջոցին մէջ տեղի ունեցող շարժումներով. գոյացութիւններու որակական տարբերութիւնները կը նկատուէր իրականութիւններ եւ որակական փոփոխութիւնները՝ էապէս անվերածելի տարրական մասնիկներու դիրքի փոփոխութիւններուն: Իրականին մէջ, Արիստոտէլ ամբողջապէս կը մերժէր Դեմոկրիտէսի ամոնական տեսութիւնը: Որակական այս տարբերութիւնները առնուած ներկայէր իր ի զօրութեան եւ ի լինելութեան դրոթեան մէջ. նախնական գոյացութեան եւ որակական փոփոխութեամբ յառաջ եկած գոյացութեան յարաբերութիւնը՝ յարաբերութիւնն է ի զօրութեան եւ ի լինելութեան: Զարգացնելով այս գա-

ղափարը, ան իբրեւ տունալ կը նկատուէր գոյութիւնը Նախնական Նիւթին — πρώτη ύλη —, անորոշ նիւթագոյ մը, որ Զեւ ստանալով կ'ըլլար գոյացութիւն մը. Զեւը ըլլալով էական յատկանիշը գոյացութեան, զայն ընողը ինչ որ ան է, կ'ըլլար տեսակ մը հոգին այդ իրին: Այսպէսով, բոլոր նիւթական մարմինները կարելի է իմացականօրէն վերածել նիւթի եւ ձեւի. բայց նիւթը եւ ձեւը ընդհանրացումներ են, որովհետեւ մարմինը միայն ունի գոյութիւն: Նիւթը եւ ձեւը ունին յարաբերութիւնը զօրութեան եւ լինելութեան, քանի որ նիւթը կարելիութիւնը ունի ձեւը ընդունելու: Նիւթը Արիստոտէլի հասկացողութեամբ, անտարակոյս որ չունի նոյն իմաստը ինչ որ մեզի համար, ոչ ալ ձեւը. այսպէս՝ քանդակուած գլուխ մը ունի երեւոյթը, բայց ոչ ձեւը — Արիստոտէլեան հասկացողութեամբ — գլուխին, քանի որ չի կրնար կատարել գլուխին յատուկ պաշտօնը:

ԳԼՈՒԽ Է.

ԱՐԻՍՏՈՏԵԼԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՏԻԵԶԵՐՔԻ ՄԵՍՈՒՆ

Այժմ ուսումնասիրենք Արիստոտէլեան դրոթիւնը տիեզերքի մասին:

Թաղէսէն սկսեալ, ընտրիւնը ուսումնասիրող փիլիսոփաներուն նման, Արիստոտէլն եւս պահեց աւանդութիւնը զանազանելու՝ մնալուն եւ անայլալ իրերու եւ ծնող ու քայքայուող իրերու միջեւ: Բարելացիներէն եւ եզգալտացիներէն մնացած փաստաթուղթեր կը վկայեն թէ մատողներ պահած են, առանց կարեւոր փոփոխութեան, իրենց դիրքն ու փայլը, աստղագիտական առաջին փորձերէն ի վեր, մինչդեռ երկրի վրայ ամէն ինչ ենթակայ էր փոփոխութեան եւ փոփոխութեան: Արիստոտէլ հետեւեցուց թէ տիեզերքի փոփոխութիւններն ենթակայ մասերը կը նոյնանան երկրին հետ, իսկ անփոփոխ մասերը՝ երկնային մարմիններուն հետ: Այսպէսով ան հասաւ տիեզերքի իմացումի մը, որ զայն կը բաժնէր երկու անհաւասար մասերու. մին՝ լուսինէն վեր կամ երկնային, որ կը յայտնուի մեր աչքերուն իբրեւ երկնակամար եւ միւսը՝ ենթալուսնային

կամ երկրային, անշարժ եւ հաստատուն գունտ՝ կեդրոնը ամբողջ դրուժեալն: Երկրային մասը իր ամենէն կեդրոնախոյս բաղկացութեանը մէջ կը կազմէ «առաջին երկինքը», որ գնդաձեւ է եւ որուն վրայ հաստատուած են աստղերը. սա ունի շրջանաձեւ թաւալում մը՝ յառաջ մղուած ուղղակի Աստուծոյ կողմէ. աստղերը որոնք հաստատուած են անոր վրայ, կազմուած են անկորստական եթերէ մը եւ չեն կրնար ենթարկուիլ փոփոխութեան կամ շարժումի բացի երկնակամարի շրջանաձեւ թաւալումէն: Աստղերը կենդանի եւ իմաստուն էակներ են, աւելի աստուածային բան մարդը: Գալով երկրային մարմիններուն, Արիստոտէլ կ'ենթադրէ որ անոնք Եմբռնագղէսի չորս տարրերն են՝ հող, օդ, ջուր եւ կրակ, իւրաքանչիւրը ենթադրուած իրեն յատուկ էական սկզբունքով:

Ըստ այս դրուժեան, «առաջին երկինքին» ներսիդին կը դառնան ուրիշ մոլորակներ, որոնք կը կրեն նախնիքներուն ծանօթ հինգ մոլորակները — Տիւր (Mercure), Սերուսեակ (Venus), Հրատ (Mars), Լուսնեագ (Jupiter), Երեւակ (Saturnes), — ինչպէս նաեւ արեւը եւ լուսինը: Ամէն մոլորակ կը դառնայ կանոնաւոր կերպով, այնպէս որ Տիեզերքին մէջ կատարուող բոլոր շարժումները կանոնաւոր են, նոյն ուղղութեամբ եւ բոլորածն: Բայց ճշգրիտ կերպով նկարագրելու համար մոլորակներուն երեւութապէս անկանոն շեղումները, անհրաժեշտ եղաւ երեւակայնի բարդ դրուժիւն եւ բոլորածն շարժումներու, մին միւսին մէջ, կազմելու համար ինչ որ կը կոչուի մակուսեղաններ — Epicycle —:

Այս վարկածը առաջին անգամ ներկայացուեցաւ Դ. դարու առաջին կէսին (Ն. Ք.) Եւտոքեսի կողմէ, որ հաշուած էր թէ անհրաժեշտ է երեւակայնի միջին քսան վեց բոլորածն եւ նոյն ուղղութեամբ ոլորումներ: Իրականին մէջ, իր մեթոտն էր տարրալուծել մոլորակներու բոլորածն շարժումներու հպատակները (fonctions) պարզ շրջանային եզրերու գումարներու, այնպէս ինչպէս կ'ընեն այսօր նոյն հարցի մաթեմատիքական ուսումնասիրութեան ընթացքին: Իրեն համար այս ոլորումները նկարագրական հանգամանք մը ունին շրջան-

ներուն համար եւ ոչ մէկ թանձրական իրականութիւն. բայց Արիստոտէլ, որուն միտքը տրամադրուած էր մաթեմատիքական վերացականութեան, բայց մը ըրաւ զէպի ետ՝ ենթադրելով որ այդ ոլորումները ունին թանձրական իրականութիւն եւ, ինչ որ աւելին է, ան ներմուծեց երկնային էակներու միջամտութիւնը որպէսզի տայ անոնց բոլորածն շարժում: Ստիպուած եղաւ աւելցնել ոլորտներու թիւը, որպէսզի արգիլէ անոնցմէ որեւէ մէկուն շարժումին փոխանցուիլը զայն պարունակողին եւ հասաւ այդպէսով քառասունեթըր ոլորտներու գումարի մը:

Արիստոտէլի քնագիտութիւնը եւ տիեզերագիտութիւնը զայն առաջնորդեցին տեսակ մը քնաքանական աստուածաբանութեան: Բնագիտութիւնը կ'ենթադրէր առաջին շարժիչ մը, ինքն իր մէջ անշարժ. տիեզերագիտութեան մէջ, առաջին շարժիչը կը մղէ ոլորտներուն ամենէն դուրսը գտնուողը, որմէ բոլոր շարժումները կը փոխանցուին տիեզերքին. եւ առաջին շարժիչը՝ Արիստոտէլի Աստուածն է: Արիստոտէլի քնագիտական աստուածաբանութիւնը մեծ ազդեցութիւն գործեց Թովմաս Ագուինացիի վրայ եւ հաւանական է որ այս եղաւ վճռական պատճառը որ մղեց վերջինի՝ ընդգրկելու Արիստոտէլի փիլիսոփայութիւնը, ընդհանրապէս: Բայց, անհրաժեշտ է ըսել, թէ Թովմաս Ագուինացին ստիպուեցաւ բազմաթիւ փոփոխութիւններու ենթարկել Արիստոտէլի Աստուածը, զայն դնելու համար ծառայութեանը մէջ քրիստոնէական աստուածապաշտութեան:

Թրգմ. ՇԱՀԷ ՎԱՐԴԱՊԵՏ

(Շարունակելի՝ 3)



ՔԵՆՅԸՐՊԸՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԵՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ԱՄԵՆ. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ

Լամբեր Պալատ, 1960

Զեղդ Ամենապատուութիւն, սիրեցեալ եղբայր մեր ի Քրիստոս.

Անկամ մը եւս, մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի Մենդեան Տօնը առկայ լինելու մեզի մտածելու Աստուծոյ անսահման սիրոյն, որ համաձայն մեր արարողագրի բառերուն, «Տուաւ իր Միածին Ողբին, որ առնելով մեր մարդկային բնութիւնը, ծնաւ ի Ս. Կոյսէն, փրկելու համար մարդկութիւնը մեղքէն ու չարիքէն»:

Իոյ՞՞ք քրիստոնեաներ, աւ որ ալ զգնուին անոնք, կը դառնան դեպի Այրը, աւ Ս. Կոյսը կը դիեցնէ Նորածին Մանուկը, եւ միացած ձովիւներու եւ մուկերու՝ կը մատուցանեն իւրեանց պաշտամունքը Անոր՝ որուն մէջ «Լնակեալ ամենայն լուսն աստուածութեան մարմնապէս» (Կողոս. Բ. 9): Սահմաններ կրճատ բաժնել Եկեղեցիները, բայց անոնք կը գերանցուին, բոլորիս պատկանող Փրկչի մեր պաշտամունքին մէջ:

Այսօր ձայներու Բաբելոն մը, որ Աստուծոյ չի գտ, կը փորձէ գրաւել ուսուցողութիւնը մտադուրեան, առաջնորդելով ժողովուրդները ամօքի եւ ողբերգութեան: Քրիստոնեայ աշխարհը այժմ, երբեմնի սուրբերու պէս, պէտք ունի սեանելու անսեսանելին, «Ձանձրեւոյթս իբրեւ զսեանալ», ինչպէս գրուած է Երազմուցոց Թուկրին մէջ (Եբ. ԺԱ. 27):

Ինչպէս որ քրիստոնեայ աշխարհը Յիսուսի Մենդեան Տօնին կը կրկնէ հրեշտակներու համերգը, «Փառք ի փարձուն Աստուծոյ, յիշեալ իր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն», մենք ալ մեր կարգին միացնենք մեր աղօթքները, աշխարհի խաղաղութեան եւ Եկեղեցիի բարօրութեան համար:

Իմ արտաքին մարդանոցն է որ ամենակարողն Աստուծոյ Զեղդ Ամենապատուութեան եւ Զեղմով գլխաւորուած Միաբանութեան եւ ժողովուրդին շնորհէ Աստուծոյ սերն ու խաղաղութիւնը, սրբազան այս Տօնին առթիւ, որպէսքի փարատին բոլոր թուրիմա-

Ս. ՅԱՆՈՐԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԻԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 1 Յուն. 1961 — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուիւն, մեր վերամատուրան մէջ: Փամարարն էր Հոգի. Ս. Կորին Վրդ. Մանուէլեան:

● Դշ. 4 Յուն. — Կէտօրէ վերջ, Ամեն. Ս. Պատարագը Հայրը Հերաշխաւորութեամբ մուտք գործեց շքեղօրէն զարդարուած Մայր Տաճար, որ Նախագահեց մեծահանդէս Նախատեսակին ու թափօրով բարձրացաւ Պատարագարան:

● Եշ. 5 Յուն. — Ս. Դարի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղոր տունը — Տօն Առաքելական Ս. Արթուրոս Երուսաղէմի — այս տարի կատարուեցաւ մեծաշուք հանդիսաւորութեամբ եւ Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատարագը Հօր՝ որ, ըստ սովորութեան, «Փառք ի բարձունքի տառն բարձրացաւ Տեառնեղոր Աթոռի պատանդակին» որ մեաց միշտ ժամերգութեան աւարտումը, երբ ընդունեց Միաբանութեան եւ ուսանողութեան շնորհաւորութիւնները՝ աշխարհայրով: «Քրիստոս Աստուծոյ մեր մաղթանքի ընթացքին, Պատր. Փառնորդ Գերբ. Տ. Հայրիկ եպ. յատուկ մաղթանքներ քրտ. Ն. Ամենապատուութեան — Տեառնեղոր Աթոռի արժանաւոր Գահակալին — բարձր կենաց եւ արեւշատութեան եւ Ս. Արթուրոս պայծառութեան եւ անառաքնութեան. Նմանօրինակ մաղթանքներ քրտ. Երուս. Երուս. պատարագիլը՝ Գերբ. Տ. Նորայր եպ. իր քարոզի վերջաւորութեան, Քարոզի քնարան էր ձեռնը: Տէր, զիտէիք եւ զամենայն հեղօթիւն Նորայր Պատարագի Սրբազանը ցոյց տուաւ հեղօթիւնը իբրեւ քրիստոնէական կրօնի մեծագոյն առաքելութիւններէ մին, Նախապայմանը հոգեկան մեծութիւններու եւ բարոյական յաղթանակներու: Քարոզէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, տեղի ունեցաւ հոգեանդատեան հեղորոտար պաշտօն՝ Ս. Արթուրոս հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար, հանդիսագրութեամբ Ամեն. Ս. Պատարագը Հօր. Իսկ Ս. Պատարագէն ետք, Պատարագը Միաբանութեան եւ ժողովուրդը «Որհնեցէ՛ք զՏէր» — Ս. Արթուրոս շարականը — երգելով թափօրով բարձրացան Պատարագարան:

ցուրիւնները մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի սիրոյն մէջ:

Զեր սիրեցեալ եղբայրն ի Քրիստոս

ՃԵՆՅՈՒ

Արեւիկ. Քեքերպարիի

Նորին Ամենապատուութիւն
Նիլիէ Արեւիկ. Տեքեքեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի

● Ուր. 6 Յուն. — Ամեն. Ս. Գառրիարք շայրը նախագահեց Ս. Ոսեթիանոսի հանդիսաւոր նախատեսակին: Տունին բաւականօրէն ելին շոգչ: Տ. Անուշաւան Վրդ. և շոգչ. Տ. Գեղամ Արքայ:

● Եր. 7 Յուն. — Ս. Ասեփանոս հախաւարկաւորի տուն այս տարին Ս. Աթոռէն ներս կատարուեցաւ մեծ շուքով: 7 Ուրկաւորներ և 4 Ուրաւիկներ, դահլիճաւոր աղապարտներով և առկնթիւ շաղկիկներով, տապաւակ և բարձր տի մեռին, առաջնորդութեամբ երկու խնկարկու վարդապետներուն, պանծացուցին յիշատակի իրենց մատարկարին: Լանդիսութեան կը նախադնէր Ամեն. Ս. Գառրիարք շայրը: Ապա մատուցուեցաւ Ս. Գառարաք՝ Մայր Տաճարի աւանդատան — Ս. Ստեփանոս մատրան — աւագ սեղանին վրայ: Ժամարարն էր շոգչ. Տ. Գեղամ Արք. Զաքարիան:

● Կիր. 8 Յուն. — Ս. Գառարաքը մատուցուեցաւ ի Ս. Լեւնտակապետ, ժամարարն էր շոգչ. Տ. Արշակ Արք. Խաչատուրեան. Ս. Թրգմ. Վարժարանի Երկրորդական բաժնի և Նախակրթարանի աշակերտութիւնը և աւագը յիշ. թիւնը ստացան Ս. Լազարգութիւն:

— Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Գեղարեան:

● Բշ. 9 Յուն. — Ս. Պետրոսի եւ Պողոսի առաքելոց տունին առթիւ, Ս. Գառարաք մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գեորգի վերնամատրան մէջ: Ժամարարն էր շոգչ. Տ. Փառէն Արք. Աւետիքեան: Ս. Թրգմ. Վարժ. Մանկապարտեզի բաժնի աշակերտութիւնը շաղկերեցաւ:

— Կէտեք վերջ, Ամեն. Ս. Գառրիարք շայրը շարժաւորաւոր մատուցուեցաւ Մայր Տաճար, ուր նախագահեց մեծահանգէս նախատեսակին ու թափօրով բարձրացաւ Գառրիարքարան:

● Գշ. 10 Յուն. — Ս. Որդւոյ Որոման տունի օրը ևս հոգեւոր ու բարեկամութեան մեծ օր մը եղաւ Ս. Աթոռէն համար: Առաւօտեան ժամերգութեանէն ետք, Ամեն. Ս. Գառրիարք շայրը հանդիսաւոր Ս. Գառարաք մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Վրդիպարի մատրան մէջ և ապա ամպօղակների տակ, կենաց փայտի մատուցն ի մեռին, նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եւաղարձ մեծահանգէս թափօրին, ու Գառրիարքարանի դահլիճին մէջ օրնուած նշխարներ բաշխեց Միաբանութեան ու Ներկայ ժողովուրդին:

● Եր. 14 Յուն. — Ամառնի առթիւ, ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց ժամերնուոյ շոգչ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ապա, Ս. Աթոռայ շարականը երգելով, Միաբանութիւն և Ժողովուրդը բարձրացան Գառրիարքարան, ուր Ս. Գառրիարքը իր Նոր Տարուոյ շնորհաւորական խօսքերէն ետք, ըստ սովորութեան, բաշխեց բոլորին մէկուան նարինջ:

● Կիր. 15 Յուն. — Ս. Գառարաքը մատուցուեցաւ ի Ս. Երանութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր շոգչ. Տ. Յակոբ Վրդ. Վարդապետ: Քարեղեց շոգչ. Տ. Կորին Վրդ. Ստեփանեան, Ժանրանալով «Ջիջ» օգտոյնի մարդ՝ եթէ զայնարհ

ամենայն շահեցի և զանձն իւր աւստեցէն խօսքին վրայ ու խօսելով մարդկային կեանքի մէջ ընչաւորացութեան պատճառաւ Զնանքութեան:

● Դշ. 18 Յուն. Ճաղալոյց Ս. Եմգեղան: Առաւօտեան ժամը 9.45ին, Ամեն. Ս. Գառրիարք շայր զիւստարութեամբ, Միաբանութիւնը Մայրաւորութիւնը դռնէն ինքնաշարժեալ շարանով մը համարյա հաւ զեղայ Ս. Մենդեան քաղաքը՝ Բեթլեհէմ: Եւ ժողովուրդէն, թափօրը զիւստարութեամբ Բեթլեհէմի Գայմազամին, Քաղաքապետին, Ոստիկանապետին, այլ բարձրաստիճան պաշտանեաներուն և անձնաւորութիւններուն, ինչպէս նաեւ հայ զաւթի Ներկայացուցիչներուն կողմէ: Զինուորական պաշտանեան պատիւներու արժանանալէ և պատուաւորներէ ետք, պատիւներին այս թափօրը ժամը 11ին հասաւ Ս. Մենդեան վանուց հրաղարանը, ուրկէ շարականի երգեցողութեամբ և զանգերու զօղակչին ընդ մէջէն ուղղուեցաւ Տաճարի մեր Տեաչարանը՝ ուր զիւստարութեան եկողներ պատուաւորութեան:

— Կէտեք վերջ ժամը 2.30ին, Ամեն. Ս. Գառրիարք շայր զիւստարացութեամբ, Միաբանութիւնը շարժաւորաւոր մատուց զօրծեց Ս. Մենդեան Տաճար: Ս. Այրի ուստին ետք, Տաճարի մեր բաժնին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութեան ու ճրգալոյցի արարողութիւնը, որոց աւարտին Ս. Գառարաք մատուցուեցաւ Ս. Այրին մէջ: Ժամարարն էր շոգչ. Տ. Գեղամ Արք. Զաքարիան: Ապա, Ս. Գառրիարքը նախագահեց Ս. Մենդեան մեծահանգէս նախատեսակին: Արարողութիւններ վերջ գտան մայրամուտին, երբ Միաբանութիւնը, զգեստաւորեալ և երգեցողութեամբ, սրնաղարդ դասիքէն անցնելով բարձրացան Ս. Մենդեան հայալանքը՝ ընթերցի:

— Գիշերեան ժամը 10ին, Միաբանութիւնը արթուն և զարմեալ, կէս ժամ ետք սկսեան համար գիշերային պաշտամունքը: Տաճարի հայկական բաժնին մէջ:

— Իսկ Երանութեան մէջ, ճրգալոյցի արարողութիւնը պաշտուեցաւ Ս. Երանութեան Տաճարի Ս. Գերեզմանի առեանին մէջ, կ. վ. ժամը 1.30ին, Իսկ Ս. Գառարաքը մատուցուեցաւ Գրիգորի Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր շոգչ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան: Ապա Գերշ. Տ. Նորայր Եպս. Նախատեսակին Ս. Մենդեան նախատեսակին: Արարողութիւնները աւարտեցան ժամը 4ին՝ Տաճարի մեր Տեաչարանին մէջ:

— Ցաղեղող առաւօտ ժամը 4-8, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցան Ս. Մենդեան հանդիսութիւնները, Ս. Գառարաքը մատուց, ըստ սովորութեան, Ս. Լեւնտակապետ վանքի Տեաչարը՝ շոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, որ քարեղեց շոգչ յորժամ քաղցրութիւն և մարգարէութիւն Բեթլեհին մերայ Մատուածայ յայտնեցաւ ընտանեակը ըսելով թէ Մտուրն մէջ յայտնուող բարութեան, դուրսին և սիրուն պէտք է փոխադարձաւ մարդոց երախտալեւ և զործական սերը, Իսկ Գերշ. Տ. Նորայր Եպս. Նախագահեց ձերբակնէքի սրտագրաւ արարողութեան:

● ԵՂ. 19 Յուլ. — ԻՐԱՆԻՆԻ ԵՆ ԱՍՏՈՒԱՆԻԱ-
ՅԱՆՏՆԻՍԻՆԻՆԻ ՏԵՍԻՍԻՆ: Կէս գիշերին, խորհրդաւոր
զանգահարութենէ մը ետք, Միաբանութիւն եւ
Ներկայ հաստատացման իրան Ս. Մննդեան Այլը՝
ուր կատարուած արարողութիւններէն մաս մը,
մաս մէկ ժամուան ժողովութեամբ, ձայնափութե-
անցաւ Յարգանանի ռատիօկայանէն: Ս. Պատրի-
արք շայրը, այդ միջոցին, կարգաց համայն
հայութեան ուղղուած իր պատգամը (որ լոյս տե-
սաւ Պաշտանութիւն Նախորդ թիւին սեղիգրոյ) և
վերադարձաւ երեսօտեմէ: Իսկ մնացեալ հանդի-
սութեանց Նախագահեց Պատր. Փոխանորդ Գիրշ.
Տ. Հայրիկ Եպոս. Առաջինը, որ, Տաճարի մեր
բաժնին մէջ, չողջ. Տ. Վրթանէս Արք. Գալայն-
եանէ մատուցուած Ս. Պատարագէն ետք, հան-
դիսապետեց Վարդնէքի արարողութեան և ապա
հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցաւ Ս. Այրին մէջ,
— Գիշերային այս հանդիսութեանց Ներկայ եղան
Նաև տարբ անդամներ և այլ բարձրաստիճան
անձնաւորութիւններ, ինչպէ՛ք: Երեսօտեմի Միա-
նափըզը և իր փոխանորդը, Յարգանանի Ընդհ.
Ապահովութեան Պետք, Երեսօտեմի Ընդհ. և Լին
Բաղադր. Պատիկանապետները, Բնիկներէ մի կա-
ռավարիչը, Գաղաքապետն ու Ռատիկանապետը,
Անկիլեան Արքեպոս. ի հետեւ որդիները, Երես-
օտեմէ մէկ Անգլիական, Ամերիկեան և Սէուտաբեան
Արարիչ Հիւպատոսները: — Արարողութիւնները
վերջ գտան արեւածային, երբ Միաբանութիւնը,
թիկեան Նախ, զգեստաւորեալ և երգեցողու-
թեամբ, սխնագարդ գաւիթէն մտնելով բարձ-
րացաւ Ս. Մննդեան հայավանքը՝ Նախաճայի:
— Կարճ դադարէ ետ ետք, Միաբանութիւնը,
երեկուան կարգով, համարյա եւս զգուշ երես-
օտեմ, ուր հասաւ ժամը Սին և բարձրացաւ Պատ-
րիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք շայրը
Ս. Մննդեան աւետիսը տուաւ ամենուն:
— Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց
Գիրշ. Տ. Հայրիկ Եպոս.:

● Ուր. 20 Յուլ. — Յիւսէպի մեղեկոյ: Ընդա-
նալ տոմարութեան համամայն, Ս. Մննդեան տե-
նին յաջորդ օրը Մայր Տաճարի Աւագ Սեղանին
վրայ կը մատուցուի Ս. Պատարագ և պատարա-
գիրք զլըլլալ Ս. Աթոռի Աւագ Թագաւորներ: Այս
տարի, Թարգման Հայրաւորք. Տ. Օհան Վրդ.,
արձանդուողով բացակայ ըլլալուն, պատարագեց
իր փոխանորդը՝ չողջ. Տ. Գեորգ Վրդ. Նաղարեան:
Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտոն՝
համայն ննջեցելոց հոգիներուն համար, Նախա-
գահութեան Գիրշ. Տ. Հայրիկ Եպոս.:

● Կիր. 22 Յուլ. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանի Զախակողմը
գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ,
ժամարարէ էր չողջ. Տ. Կիրիլ Վրդ. Գաբրիկեան:

● Դչ. 25 Յուլ. — Նախատեսակին ի Ս. Յա-
կոբ Նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք շայրը:

● ԵՂ. 26 Յուլ. — Ամուսնականութիւն Տեմոս:
Առաւօտեան ժամը 8.30ին, Գիրշ. Տ. Սուրէն
Արքեպոս. Քէմհանեանի գլխաւորութեամբ, Միա-
բանութիւնը շնորհակալութիւն մատուց գործեց Ս.

Յարութեան Տաճար, ուր Գիրշ. Հանդիսապետ
Սրբազանը մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պա-
տարագը Գրիգորոս Ս. Գիրքզմանին վրայ: Վսեռ
վերադարձին, Հայոց Թաղի մուտքէն, Միաբա-
նութիւնը տեսին շարականը — Օլոյս ի լուսոյ —
հրգելով յառաջացաւ զկայ Մատուլանք և բարձ-
րացաւ Պատրիարքարան՝ ուր կը պատէր Ամեն.
Ս. Պատրիարք շայրը, որ, զգեստաւորուելով, կը
Նախագահէ Տեմոսինէքի արարողութեան: Կ'օրն-
նըսին Ս. Աթոռայն բարիքները և Կ'երգուին Ս.
Մննդեան և Մկրտութեան շարականներ, իբրեւ
փակուել Մննդեան տեսնուալ շրջանին: Ապա, ժա-
մարնեղ Հայրաւորքին գլխաւորութեամբ, Նոյն
արարողութիւնը կը կրկնուի մատուլին, փութին,
սեղանատան և ի վերջոյ խոհանոցին մէջ՝ ուր
Կ'օրնուի օրուան յատուկ ճեղքայի աւանդական
հաշը:

● Ուր. 27 Յուլ. — Նախատեսակին ի Ս. Յա-
կոբ Նախագահեց Գիրշ. Տ. Նորայր Եպոս.:

● Եր. 28 Յուլ. — Ս. Յովնանու Կարապետի
ծննդեան տոնին առթիւ, Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին Սեղակողմը
գտնուող Ս. Յովն. Կարապետի խորանին վրայ,
ժամարարէ էր չողջ. Տ. Գեղամ Արք. Զաքարեան:

● Կիր. 29 Յուլ. — Բարեկ. Առաջնորդի Կանոն:
Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան,
մեր վերանամարան մէջ, ժամարարէ էր չողջ. Տ.
Յակոբ Վրդ. Վարդանեան Ս. Մննդեան խորանու-
ղին շուրջ իմաստաւից քարոզ մը խօսեցաւ չողջ.
Տ. Կիրիլ Վրդ. Գաբրիկեան: Գարողը և Ս. Պա-
տարագը արարողութենէն մաս մը, ժամը 9-10,
ձայնափութեանց Երգանանի ռատիօկայանէն:

ՊԼԵՏՈՆԱԿԱՆ Ք

● Կիր. 8 Յուլ. — Օրթոտոք Եկեղեցւոյ Ս.
Մննդեան տոնին առթիւ, Կէսօրէ առաջ, Ամեն.
Ս. Պատարագ շայրը, ի զուլի Միաբանութեան,
շնորհաւորութեան ցնաց Յունաց Կատարաբա-
րան: Իսկ Գիրշ. Տ. Սուրէն Արքեպոս., ընկերակ-
ցութեամբ չողջ. Հայրաւոր, այցելեց Հլատայ,
Առաւել և Հաղէլաց վանքերը:

● Եր. 14 Յուլ. — Իսլամաց Միրանի (Մու-
համմէտի համարձման) տոնին առթիւ, Կէսօրէ
վերջ, Իսլամական Գոնգրէնի կողմէ կազմա-
կերպուած անդէսին և ընդունելութեան Ներկայ
գտնուեցան Գիրշ. Տ. Հայրիկ Եպոս., չողջ. Տ.
Գեղամ Արք. և Տիար Կարպիտ Լինդլեան: Հան-
դիսութեան կը Նախագահէր Նորին Վեհ. Հիւսէյն
Թաղաւորը:

● Կիր. 15 Յուլ. — Եւթի տոնին առթիւ,
Կէսօրէ առաջ, Գեթեմալի լատինաց պարտէիին
մէջ կատարուած ծառի տնկման հանդիսութեան
Ներկայ եղան չողջ. Տ. Կիրիլ Վրդ. և Տիար Կ.
Լինդլեան: Հանդիսութեանց կը Նախագահէր Ն.
Վեհ. Հիւսէյն Թաղաւորը:

- դ) Արեւմտ Հեթեհերով - Մեծորդ Տէօքփէճեան: Մատեն. Ապրիլեան եղեռնի թիւ 8: Անթիլիաս, Տպ. Կաթղ. Կրկին, 1960, էջ 69:
- դ) Կեանք եւ Մահ - Հայկանուշ Մելքոնեան: Մատեն. Ապրիլեան եղեռնի թիւ 9: Անթիլիաս, Տպ. Կաթղ. Կրկին, 1960, էջ 34:
- ե) Վերքեր ու Ցաւեր - Աննա Կ. Միրաքեան: Մատեն. Ապրիլեան եղեռնի թիւ 10: Անթիլիաս, Տպ. Կաթղ. Կրկին, 1960, էջ 67:

Քուլտուրական Հայ Ազգ. Դուրեան Վարժարանի (1937-1959) - Ս. Փաւլոս, Պրազիլ (Բոր-թուկերէն լեզուով), 1960:

Հ. Բ. Ը. Մ. Էն (Պէյրուս) ստացանք Ազգապատումի Բ. Հատորին Ա.-Դ. Գիրքերը: Ազգապատում (Բ. Հատոր, Գ. Գիրք) - Նուէր Տաճատ Սրապեանէ: Պէյրուս, 1960:

Բագրատունի ներկու Սմբատներ - Յակոբ Տէր Մելքոնեան (Նուիրատու): Պէյրուս, 1960, Տպ. Տիգրայուհի Բաքէլեան կը նուիրէ. - [էջ 317,

ա) Այց մը Անի Քալափին - Ս. Մ. Մոցիկեան: Նիւ Եորք, 1914, էջ 40: [434]

բ) Աւարտ-Կովկաս (Մասն Ա., Արարատ) - Ս. Մ. Մոցիկեան: Յրէզնո, 1917, էջ 11: Ամենուն Տարեգիրքը (Զ. Տարի, 1961) - Կ. Գէորգեան: Նուէր Վահէ Ալթիանէ: Պէյ-րուս, 1960, էջ 672:

Նոյնի 8 Հատորներու (1954-1961) Նիւթերու ցանկը: Պէյրուս, 1961, էջ 31:

Հայուն Տարեցոյցը (ԺԲ, Տարի, 1961) - Վարդան ԲՅ. Ժամկոչեան (Նուիրատու): Փարիզ, Անդրօրինեան Զայնը - Պօղոս Սնապեան (Նուիրատու): Պէյրուս, 1960, էջ 93: [էջ 143: Բնականագիտութիւն եւ Ցուեք - Է. Բարազեան: Նուէր Հայ Ազգ. Հիմնադրամէն: Գահիրէ, 1960, էջ 187:

Գրեթէ Գիւղի Պատմութիւնը - Տքթ. Նաւասարդ Տէյրիմէճեան (Նուիրատու): Պէյ-րուս, 1960, էջ 207:

Անան Նրդե - Դոկա. Գ. Սմատեան: Նուէր Պ. Էլէկեանէ: Փարիզ, 1960, էջ 112:

Վախճանը Հասու - Վեր. Տրիթթէն Զօրպանեան (Նուիրատու): Պէյրուս, 1960, էջ 32:

Կեանքի Ուղիներով (Բ. Հատոր) - Սիմոն Վրացեան (Նուիրատու): Պէյրուս, 1960, էջ 307:

Արիական Հունձ - Նուէր Կարպիս Տէր Մեհրոպեանէ: Պ. Այրէս, 1960, էջ 437:

Աւստրալիացոյ Վարդանայ Վարդապետի - Հրատ. Հ. Բ. Ը. Մ. Էն: Փարիզ, 1960, էջ 1 + 76:

Հ. Մ. Մ. Ալպով (1959-1960) - Նուէր Հ. Մ. Մ. Էն: Պէյրուս:

Նարեկ (Ե. Տպ.) - Ալիս. Թրք. Թորգոմ Պատրիարքի: Հրատ. և Նուէր Ս. Յակոբեանց Տպարանի: Նուիրատու, 1960, էջ 517:

Օրացոյց 1961 - Եւթ. Ս. Արտուր: Տպ. և Նուէր Ս. Յակոբեանց Տպարանի: էջ 176:

Օրացոյց 1961 - Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի, Խաթանպուլ: Նուէր Նոյարարձութենէն:

Օրացոյց 1961 - Հրատ. Հայ Կոյրերու և Համբերու Հաստատութեան, Պէյրուս:

Օրացոյց 1961 - Նոր Զուգա, Սպահան:

Օրացոյց «Երկիր» Շարաթաթերթի - 1961, Աթէնք:

Բաժնի Օրացոյց (20րդ Տարի, 1961) - Կազմեց Տաճատ Պօղոսեան (Նուիրատու):

Լեւոնապատմական Նրդե - Հովիկ Գասպարեան (Նուիրատու): Թէհրան, 1961:

Հումակերութիւն (Հատոր Ա.) - Ա. Տէր Յովհաննիսեան (Աւերյով) (Նուիրատու): Թէհ-րան, 1960, էջ 566:

ADDRESS - By Robert L. Garner. Int. Finance Corporation. 1960 Meeting of the Board of Governors, Sept. 29, 1960. pp. 12.

INT. FINANCE CORPORATION - 4th Annual Report (1959-1960). Pp. 32.

ALL ABOUT YOUR CANARY - R. T. French Co., New York, 1951, pp. 72.

FIFTY-TWO - Autumn 1960, No. 6. A review of books and authors from Geoffrey Bles. London, pp. 36. [1960, pp. 31.

WORLD STUDENT CHRISTIAN FEDERATION - 65 years of Tradition. Geneva,

A FURTHER ARGUMENT ABOUT «ANNAKUM» - (Rev.) Mesrob K. Krikorian (pre-
sented by the author). Extract from Acta Orientalis XXV, 1-2. Copenhagen, pp. 12.

THE AMERICAN DIRECTORY FOR JORDAN - Jerusalem, 1960/61, pp. 132.

CALENDAR OF RELIGIOUS CEREMONIES IN BETHLEHEM (English and Arabic),
for the period Dec. 24, 1960 to Jan. 19, 1961.

THE COMEDY OF COLOURS - Isabel (donated by her). Beirut, 1960, pp. 120.

Mr. O. Daniels of the Broadcast Music Inc., New York, presents the following musical
works of Alan Hovhannes. —

- a) GLORY TO GOD - Cantata.
- b) CONCERTO NO. 1 - Arevakal.
- c) MYSTERIOUS MOUNTAIN (Symphony No. 2).
- d) TALIN (Concerto).

The Seventh - Day Adventist Church in Jerusalem presents the following. —

- a) THE DESIRE OF AGES - Ellen G. White. 1940, pp. 855.
- b) LOVE UNLIMITED - Ellen G. White. 1958, pp. 313. [832.
- c) THE STORY OF PATRIARCHS AND PROPHETS - Ellen G. White, 1958, pp.
- d) THE PROPHETIC FAITH OF OUR FATHERS (Vol. I) - 1950, pp. 1006.
- e) " " " " " " (" II) - 1948, pp. 863.
- f) " " " " " " (" III) - 1946, pp. 802.
- g) " " " " " " (" IV) - 1954, pp. 1295.

LE CHANT DU MONDE - Alice Khatchadourian (offert par lui). Paris, 1960, pp. 49).

LA PHILOSOPHIE D'HELVETIUS - Kh. Momdjian. Editions Des Langues Etrangères.
1959, pp. 445.

ՄԱՍԻՆՈՅ ՏՆԿ ԵՆ՝

ԱՆՈՒՇԱԴԱՆ ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ

ՀՐԱՋԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

ԵՒ ԻՐ

ՎԻՍԿԱՏԱՐ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ՓՈՐՁ ՄԸ
ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՏՈՒՆ)

ՏՊԱՐԱՆ ՄՐՐՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԿԷՄ

1960

Ս. Է. ՌԻԱՅԹԵՔԸՐ

ԱՆԴԱՄ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մ Ի Զ Ո Յ Ը

ԵՒ

Ո Գ Ի Ն

ՑԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՑԻԶՋԵՐԻՐ ՄԱՍԻՆ՝

ԵՒ

ՓԱՍՏԵՐ ԱՍՏՈՒԴՈՑ ԳՈՑՈՒԹԵԱՆ

ՅԱՐԳՄԱՆԵՑ

Շ. Վ. Ա.

ԵՐՈՒՍԱԿԷՄ՝

1961